

Սուրբ Գրիգոր Նարեկացին Պիտի Հռչակուի Տիեզերական Եկեղեցույ Վարդապետ

Հռոմի Ֆրանսիս Պապը Վատիկանի մէջ յայտարարած է որ, Գրիգոր Նարեկացիին պիտի շնորհէ Տիեզերական Եկեղեցույ վարդապետի տիտղոսը:

Սուրբ Գրիգոր Նարեկացին ոչ միայն մեր հոգեւոր աշխարհի մեծագոյն ներկայացուցիչներէն է, այլև հայ մտքի, փիլիսոփայութեան, միջնադարեան վաղ վերածնունդի բարձրագոյն կատարելութիւն, որու «Մատենանոց Ողբերգութիւն» վեպը աւելի քան հազարամեակ մը յետոյ կը մնայ անգերազանցելի:

Հայ Կաթողիկէ Եկեղեցույ ներկայացուցիչ Տէր Գրիգոր աւագ քահանայ Մկրտչեան, «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին շեշտեց, որ Ֆրանսիս Պապը այս մասին անձամբ պիտի յայտարարէ Ապրիլն, Վատիկանի մէջ Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին մատուցուելիք պատարագի ժամանակ. - «Դեռեւս շնորհուած չէ: Պաշտօնապէս յայտարարուած է, որ պիտի շնորհուի: Եւ դա լինելու է, կարծեմ, Ապրիլի 12-ին, երբ Հռոմի Սուրբ Պետրոս տաճարում Հայոց ցեղասպանութեան զոհերի համար սուրբ պատարագ է մատուցուելու»:

Տէր Գրիգոր նաև շեշտեց, որ Նարեկացիին տիեզերական վարդապետի տիտղոսի շնորհման գործին մէջ մեծ դեր ունեցած է Հայ



Սուրբ Գրիգոր Նարեկացի

Կաթողիկէ Եկեղեցույ առաջնորդը՝ ամենապատիւ Ներսէս-Պետրոս Կաթողիկոսը:

Բացատրելով թէ ինչ կը խորհրդանշէ այդ տիտղոսը, Տէր Գրիգոր ըսաւ. - «Անոր թողած գրական ժառանգութիւնը, յատկապէս «Մատենանոց Ողբերգութեանը» քրիստոնէական եկեղեցու վարդապետութեան մէկ ձեւ է հաւատքի արտայայտման, հաւատքի տարածման համար»:

Հայ Առաքելական Եկեղեցույ հոգեւոր հովիւներէն Տէր Կիրակոս քահանայն «Ազատութեան» յայտնած է, որ հայ սրբերէն Նարեկացին միակն է, որ արժանացած է Կաթողիկէ Եկեղեցույ այս տիտղոսին:

ՍԴՀԿ Կը Դատապարտէ Միացեալ Նահանգներու Երկակի Քաղաքականութիւնը

Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութիւնը հայկական կողմին կրկին կոչ ըրած է Պաքոն վերադարձնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տարածք մուտք գործած եւ սպանութիւն կատարած ստրպէյճանցի հետախուզները:

Պետական Քարտուղարութեան մամուլի խօսնակ Ջէն Փասքի համաձայն, Միացեալ Նահանգները անցեալին նոյնպէս հանդէս եկած է նման կոչով:

«Կողմերը, որպէս կանոն, միշտ ալ գերիններ փոխանակելու միջոցներ գտած են՝ որպէս մարդասիրական ժեստ, եւ նման ժեստերը միշտ նուազեցուցած են լարուածութիւնը եւ ամրապնդած՝ կողմերու միջեւ վստահութեան մակարդակը», - պարզաբանած է Փասքին:

Այս առթիւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի վարչութիւնը հանդէս եկաւ յայտարարութեամբ, դատապարտելով Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութեան կոչերը՝ ստրպէյճանցի յանցագործները Պաքոնին յանձնելու կապակցութեամբ:

«Մենք հերթական անգամ գործ ունենք երկակի ստանդարտների քաղաքականութեան հետ: Ձեր-

բակալուած դիւերսանտները սպաննել են երկու անմեղ քաղաքացիների եւ ծանր վիրաւորել միւսին: Դրա հետ մեկտեղ, Արցախի Հանրապետութիւնում անցկացուել է բաց եւ թափանցիկ դատավարութիւն, որի արդիւնքում դիւերսանտները ստացել են արժանի պատիժ: Բացի այդ, դեռեւս չի մոռացուել Հունգարիայի կողմից մարդասպան Ռամիլ Սաֆարովի արտայանձնումը, որի հետեւանքով վերջինս Ատրպէյճանում անմիջապէս ազատ արձակուեց եւ հուշակուեց «ազգային հերոս», - ըսուած է Կուսակցութեան յայտարարութեան մէջ:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը նաև գարմանք կը յայտնէ Հայաստանի Արտաքին Գործոց նախարարութեան այս հարցի շուրջ լուրսութեան կապակցութեամբ:

«Ընդհանրապէս, պատերազմող երկրի Արտաքին Գործերի նախարարութիւնը պէտք է լինի առաւել համարձակ եւ նախաձեռնող: ՍԴՀԿ տարբեր գործիչներ բազմիցս առիթ են ունեցել յայտարարելու, որ ԱԳՆ-ի լուրսութիւնը տարբեր մարտաշրջանների դէպքում ուղղակի անհասկանալի է եւ վերաճում է վախկոտութեան», - կ'եզրակացնէ ՍԴՀԿ Հայաստանի վարչութեան յայտարարութիւնը:

Երեւան Կ'արձագանգէ Հայ-Թրքական Արձանագրութիւններուն Գծով Անգարայի Պայմանին

Որպէսզի Հայ-Թրքական արձանագրութիւնները «ուժի մէջ մտնեն», Հայաստան պէտք է պարպէ Ատրպէյճանի գրաւուած հողերը», - Պաքոն կատարած այցի ընթացքին նման յայտարարութեամբ հանդէս եկած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլու:

Ատրպէյճանցի իր պաշտօնակից էլմար Մամեստարովի հետ միատեղ ասուլիսի ժամանակ, Չաւուշօղլու ըսած է, թէ Հայաստան «չկարողացաւ անցնիլ անկեղծութեան քննութիւնը, հետեւաբար իր խորհրդարանէն արձանագրութիւններու ետեւանք ոչ մէկ նշանակութիւն չունի»:

«Ատրպէյճան եւ Թուրքիա կը փափաքին, որպէսզի Հարաւային Կովկասը դառնայ խաղաղութեան եւ անվտանգութեան վայր: Սակայն Հայաստանի մտադրութիւններն այլ են: Հարաւային Կովկասը կը վերածուի խաղաղութեան եւ անվտանգութեան վայրի, եթէ Հայաստանը ուղղէ իր գործած սխալները եւ յարգելով Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, լքէ իր գրաւուած տարածքները», - յայտարարած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը:

«Կեղծ տեղեկութիւններ տարածելով՝ անկեղծութեան մասին խօսելը, մեղմ ասած, տարօրինակ է, բայց, միեւնոյն ժամանակ, բնորոշ Թուրքական իշխանութիւններին», - իր կարգին ըսաւ Հայաստանի արտաքին գործոց փոխնախարար Շաւարշ Քոչարեան, պատասխանելով Թուրքիոյ արտաքին գործոց նախարարի այն յայտարարութեան, թէ Անգարան միշտ նախապայման դրած է Հայ-Թրքական յարաբերութիւններու դասաւորման համար, եւ այդ յայտնի էր ամբողջ աշխարհին:

«Ինչպէս նշել է արտգործնա-»

Շարք էջ 4

Նորընտիր Գոնկրէսական Հարտի Որոշած է Մաս Կազմել Հայկական Համախմբումին



ՀԱՍ-ի ներկայացուցիչները Գոնկրէսի անդամ Քրէսընթ Հարտիի հետ

ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱՍ) ներկայացնող պատուիրակութիւն մը Լաս Վեկասի մէջ հանդիպում ունենալով վերջերս Ամերիկայի Գոնկրէսի անդամ ընտրուած Քրէսընթ Հարտիի (Հանրապետական, Նեւատա նահանգէն) հետ, քննարկեց Ամերիկահայութիւնը յուզող հարցերը եւ տեղեկութիւններ փոխանցեց Հարաւային Նեւատայի մէջ տակաւ մեծացող հայ համայնքի մասին:

«Որպէս ընտրեալ ներկայացուցիչը աճող Ամերիկահայ բնակիչներուն, ես խանդավառ եմ գործակցելու ՀԱՍ-ի հետ, առաջ մղելու համար հայութեան սրտին մօտ եղող հարցերը», - ըսաւ գոնկրէսական Հարտի: «Ես նուիրուած եմ 4-րդ ընտրաշրջանի յառաջդիմութեան եւ կը խոստանամ օժանդակել՝ Ամերիկահայ համայնքին: Որպէս փաստ, որոշեցի մաս կազմել

Ներկայացուցիչներու Տան հայկական համախմբումին», հանդիպումի ընթացքին շեշտեց գոնկրէսականը:

«Մեծ պատիւ էր գոնկրէսական Հարտիի հետ քննարկել Ամերիկահայութեան համար կարեւորութիւն ներկայացնող հարցերը», - այս առթիւ յայտարարեց ՀԱՍ-ի ատենապետ Սեւակ Խաչատուրեան: «Անոր պատրաստակամութիւնը՝ գորավիզ ըլլալու մեր հարցերուն եւ ցանկութիւնը՝ օգտակար ըլլալու մեր համայնքին, մեծապէս գնահատելի է եւ մենք պատրաստ ենք գործակցելու գոնկրէսական Հարտիի հետ, տարբեր ծրագիրներու շուրջ», աւելցուց Խաչատուրեան:

Քրէսընթ Հարտի անցեալ Նոյեմբերին ընտրուեցաւ Ներկայացուցիչներու Տան անդամ, Նեւատայի 4-րդ ընտրաշրջանէն, որ կ'ընդգրկէ Լաս Վեկասը եւ մօտակայ քաղաքները:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հանրութեան Պատժելու Գործառոյթը

ՍԱՐՕ ՍԱՐՈՆԱՆ

Մեր երկրում ժողովրդավարութեան հոլոթիւնը թիւրքմբունելու եւ ստեղծուած անմխիթար իրավիճակում մարդկանց կողմից ելքեր չգտնելու հարցում դեր ունի հանրութեան իրաւագորութեանը պատկանող մի կարեւոր գործառույթի անտեսումը: Դա կ'արգազանցին պատժելու գործառույթի շրջանցումն է հենց իր՝ ժողովրդի կողմից: Այդ գործառույթի անտեսումը դարձել է եւ հանրութեան, եւ յատկապէս քաղաքական գործիչների տեսական անգիտութեան ու գործնական անգորութեան ցուցիչը:

Բաւական տարածուած է, օրինակ, այն մտածողութիւնը, երբ առերեւոյթ ժողովրդավարական կարգախօսներով ներկայացող գործիչները, խօսելով Հայաստանում հաստատուած յանցաւոր վարչախմբի դէմ իրենց (իրենց խմբերի) պայքարի տեսլականների մասին, վկայակոչում են սահմանադրական ճանապարհով պայքարելու սեփական համոզումը: Սակայն, առաւել մանրակրկիտ ծանօթանալով նոյն այդ գործիչների հայեացքներին ու տեսական մօտեցումներին, գալիս ես այն համոզման, որ նրանց կողմից արտաբերուող «սահմանադրական ճանապարհ» խօսքի հիմքում ընկած է քաղաքական պայքարի ընթացքում ոչ միայն բռնի ուժ չկիրառելու մօտեցումը, այլ նաեւ ֆիզիկական որեւէ լուրջ ներգրաւման բացառումը: Խօսքն, իհարկէ, հանրահաւանքներին, ցոյցերին, երթերին չի վերաբերում, որոնք ֆիզիկական ներգրաւման միջոցներ լինելով, այնուամենայնիւ, խաղաղ

պայքարի միջոցներ են եւ յանցաւոր ռեժիմի հետ ֆիզիկական կոնտակտի տարրեր գրեթէ չեն պարունակում: Այդ գործիչները բացառում են պայքարի ընթացքում հանրութեան առաւել կոշտ ներգրաւումը եւ ընդհանրապէս ֆիզիկական դիմադրութիւնները վարչախմբի այս կամ այն օղակի հետ յարաբերութիւններում՝ դիտարկելով դա որպէս բռնութեան կիրառում:

Ընդհանրապէս, բոլոր գիտակից մարդկանց համար պարզ է, որ բռնութիւնն իր հերթին նոր բռնութիւն է ծնում, որով էլ հանրութեանը կանգնեցնում է առաւել մեծ վտանգի ենթարկուելու խնդրի առաջ: Մի երկրում, որտեղ հանրային կարգի պահպանութեան ու հանրային անվտանգութեան պաշտպանութեան պատասխանատու ինստիտուտը՝ ոստիկանութիւնը, գտնուում է քրէսօլիզացիոն վարչախմբի ընդհանուր վերահսկողութեան տակ, բռնութեան միջոցով հարցերի լուծման ճանապարհը բերում է գէնքի միակողմանի կիրառմանը: Յանցաւոր վարչախմբի եւ նրա պահպանութիւնն իրականացնող բանդաների համատարած գինուածութեան պայմաններում, բռնութեան միջոցով դիմադրութիւն կազմակերպող հանրային այս կամ այն միաւորին սպառնում է լիարժէք ոչնչանալու վտանգը:

Սակայն, բռնութեան նկատմամբ այդ սկզբունքային մօտեցումը չէ, որ մեր երկրում չեզոքացնում է կ'արգազանցին պատժելու՝ ժողովրդին վերապահուած գործառույթի կենսագործումը: Ընդհանրապէս, քաղաքական սուբեկտներին, ինչպէս նաեւ քաղաքացի-

ական տարբեր շրջանակների կողմից բռնութեան փոխադարձ բացառումը հենց առողջ հանրութեան եւ առողջ քաղաքական յարաբերութիւնների ցուցիչն է: Խնդիրն այն մտածողութեան ձեւն ու տեսական հիմնաւորումներն են, որոնք ընկած են քաղաքական գործիչների առանձին մեկնաբանութիւններում: Մտուելով մեր հանրութեան կրօնական գիտակցութիւնից՝ այդ մեկնաբանութիւններում բռնի ուժի կիրառումը բացառելու սկզբունքից անհանգում են նաեւ ֆիզիկական դիմադրութիւն ցոյց չտալու մօտեցումները: Ձեւական տրամաբանութեանը դիմելու միջոցով կատարում է այն թիւր ենթադրութիւնը, թէ բռնի ուժի բացառումը սահմանադրական կարգի հաստատմանը միտուած պայքարի ժամանակ ընդհանրապէս բացառում է նաեւ անհատի կողմից ֆիզիկական ակտիւ ներգրաւման ու դիմադրութեան կազմակերպման հնարաւորութիւնը:

Սակայն, մինչ հանրութեան ֆիզիկական ակտիւ ներգրաւման ու դիմադրութեան մասին խօսելը հարկ է մի փոքր անդրադարձ կատարել այդ հարցում քաղաքագիտութեան մատուցած տեսական հիմքերին:

Ներկայ ժողովրդավարութիւնն իր ինստիտուցիոնալ կառուցուածքային տարրերը ստացել է Հոռոմի Հանրապետութեան քաղաքական համակարգից եւ Հոռոմէական իրաւունքից: Եւրոպական ժողովրդավարութեան ակունքները ուղղակիօրէն կապուած են Յունահռոմէական աշխարհի պետական կարգերի ու իրաւական ընթացակարգերի հետ: Ուստի, ներկայ ժողովրդավարութեան տեսական այդ հիմքերը բանալի են ծառայում՝ հասկանալու, թէ ներկայ դարում տեղ գտնող քաղաքական

բռնութիւնները կանխարգելելու գործում սկզբունքային առումով ի՞նչ լուծումներ կարող են լինել: Չէ՞ որ լուծում առաջադրող անցեալի քաղաքական շատ մեխանիզմներ ուղղակի արտայայտութիւնն են եղել կոնկրետ քաղաքական իրավիճակի, այն դէպքում, երբ ներկայումս երրորդ աշխարհի երկրները, ընթանալով արագացուած ժողովրդավարացման ուղիով, մեծամասամբ չեն կարողանում ընկալել ժողովրդավարական այս կամ այն ինստիտուտի իմաստը, խաթարման գիւնը, ինչպէս նաեւ դրա վերականգնման հնարաւորութիւններն ու ճանապարհը:

Ներկայիս ժողովրդավարութեան բնօրրան Հոռոմում հանրութիւնը օժտուած է եղել պատժելու գործառույթով: Այլ կերպ ասած՝ նրան է վերապահուած եղել պետութեան կարգը խախտողի նկատմամբ հարկադրանքի ուժ կիրառելու եւ նրան իր կատարած հանրօրէն վտանգաւոր արարքի համար արժանի հատուցումը տալու իրաւունքը: Օրինակահանցուած հարկադրանքի ուժ կիրառելու իրաւունքը իւրաքանչիւր պետութեան պարտադիր տարրերից է, որը բանեցուծ է անձանց մօտ սոցիալապէս ընդունելի վարքագիծ ձեւաւորելու եւ համակեցութիւնը խաթարող սոցիալական արարքները կանխարգելելու համար: Ժամանակակից արեւմտեան ժողովրդավարութեան առանցքային երկրների հանրութիւնները անցեալում գիտակցուած պատուիրակման միջոցով իրենց պատժելու գործառույթը յանձնել են մասնագիտացուած պետական ինստիտուտներին՝ իրաւա-

Մար.ք էջ 16

ԲՀԿ-ի «ոչնչացմամբ» ոչինչ չի աւարտուում, գուցէ սկսւո՞ւմ է

Թ.ՄԱՐԻՐԱԳՐԱՏՈՒՆԻ

ՀՀԿ-ԲՀԿ առճակատումը եւ դրա հետեւանքները օր-օրի ի յայտ են գալիս: Հանրապետականները իրենց Մտուակեանի առջեւ դրուած պայմանների մասին բաց ու անկաշկանդ են ներկայացնում, ցոյց տալով, թէ Մտուակեանը ինչ-ինչ դէպքում կարող է մնալ պատգամաւոր:

Այսինքն, Հայաստանի քաղաքական դաշտում մոնոպոլիան յստակ ի ցոյց է դրւում, եւ հանրապետական իշխանութիւնները չեն էլ փորձում դա թաքցնել՝ մենք են խաղի կանտները գծողը եւ մենք ենք գծուած սահմաններից դուրս եկողներին՝ «խաղից» հանողները:

Հիմա ՀՀԿ-ականները տօնում են սեփական յաղթանակը, յաղթանակած հարցադրոյցներ տալիս լրատուամիջոցներին, սակայն արդեօ՞ք սա յաղթանակ է...

Քաղաքական դաշտը չի կարող մնալ մոնոպոլիզացուած: 21-րդ դարում այդպէս չի լինում: Նոյնիսկ խորհրդային համակարգը լինելով հօր՝ չդիմացաւ, պայթեց: Արդեօ՞ք հիմա, 21-րդ դարում, համացանցի ազատ դարում հնարաւոր է քաղաքական դաշտում ամրացնել, յաւերժացնել իշխող վերնախաւի իշխանավարումը...

Ինչ կարող է անել այս պայմաններում Սերժ Սարգսեանը: Նա երկու ճանապարհ ունի: Կամ պահ-

պանել թիմը եւ թոյլ չտալ այլ ուժերի առաջխաղացում, որը կարող է ի վերջոյ յանգեցնել ներսից պայթիւնների ու համակարգի քայքայման, կամ միւս ճանապարհով՝ ստեղծել հնազանդ ուժ կամ ուժեր, ապահովելու հայաստանեան քաղաքական դաշտի «այլընտրանքային» լինելը: Թերեւս, հենց այս նպատակով՝ Սերժ Սարգսեանը իր յայտնի ելոյթում նշեց, որ ԲՀԿ-ում կան խելացի, հայրենասէր մարդիկ: Գուցէ Սերժ Սարգսեանը կողմնակից լինի, որ ԲՀԿ-ի այդ հատուածի հետ աշխատի, կշիռ ունեցող ուժ դառնայ, բայց իր գծած սահմանների շրջանակներում:

Իսկ ի՞նչ կը լինի ԲՀԿ-ի ոչ հնազանդ հատուածի հետ, որոնք կողմնակից էին՝ հակադրուել գործող իշխանութեանը եւ հասնել իշխանափոխութեան: Առայժմ դժուար է միանշանակ ասել, թէ ինչպիսին կը լինեն այդ ԲՀԿ-ականների գործողութիւնները: Յամենայնդէպս, Հայաստանում իրական փոփոխութիւնների եւ արմատական քայլերի գնալու կողմնակիցները ամենայն հաւանականութեամբ կը գտնեն ձեւեր քաղաքական դաշտում իրենց տեղը գբադեցնելու:

ԲՀԿ-ի «ոչնչացմամբ» ոչինչ չի աւարտուում: Գուցէ սկսւո՞ւմ է մի նոր փո՞ւլ՝ հին անձերով, նոր ասելիքով եւ նոր՝ իրական «այլընտրանք» առաջնորդով...

«ՀԱՅԵԼԻ»

Եկել է հեռանալու ժամանակը

ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Հայաստանի Կենտրոնական բանկը 2015 թրուականի համար գրեթէ զրոյական տնտեսական աճ է կանխատեսել՝ 0.4-2%-ի սահմաններում: Աւելի վաղ ԱՎԾ-ը տուեայներ էր հրատարակել Յունուաւրին՝ Եւրասիական միութեանն անդամակցելուց յետոյ ներմուծման ու արտահանման կտրուկ անկման մասին:

Զրոյական տնտեսական աճը նշանակում է, որ ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցութիւնն ու կառավարութեան ներկայիս քաղաքականութիւնը երկիրը դէպի անդունդ են տանում: Կառավարութիւնը ելքեր է փնտռում, այն նոյնիսկ համաձայնուել է վաճառել Որոտանի ՀէԿ-ն ամբրիկացիներին (սակայն դեռ այդպէս էլ չի վաճառել): Սակայն դա հազիւ թէ օգնի լուծել խնդիրները, եթէ կառավարութիւնը չփոխի իր քաղաքականութեան վեկտորը: Կամ էլ պէտք է փոխուի կառավարութիւնը:

Յովիկ Աբրահամեանը տնտեսութեամբ զբաղուելու ժամանակ չունի: Նա հիմա փորձում է փրկել իր ինամի Գագիկ Մառուկեանի «կայսրութեան» մնացորդները եւ պահպանել իր կայսրութիւնը: Նա ժամանակ չունի, պալատական ինտորիզները չափազանց շատ են: Տնտե-

Մար.ք էջ 16



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՄԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամբրիկայի Մրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ

ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տէր-Պետրոսեանն Այլ Եւս Սարգսեանին Հանդիպելու Անհրաժեշտութիւն Չի Տեսնում

Լեւոն Տէր-Պետրոսեանն այլ-եւս Սերժ Սարգսեանի հետ առանձնազրոյցի անհրաժեշտութիւն չի տեսնում: Այս մասին ասուած է Հայ Ազգային Գոնկրէսի տարածած մամուլի հաղորդագրութեան մէջ:

ՀԱԿ իստանակ Արման Մուսինեանը նշել է, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը լիովին բաւարարուած է Սերժ Սարգսեանի պատասխանով՝ զնահատելով այն հանգամանքը, որ նրանում յստակօրէն շարադրուած է վերջինիս տեսակէտը «Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի» վերաբերեալ:

«Սարգսեանը համարում է, որ հռչակագիրը հրաշալի փաստաթուղթ է եւ արտայայտում է համայն հայութեան կամքը: Մինչդեռ Տէր-Պետրոսեանը համարում է, որ հռչակագիրը Հայաստանի եւ Ղարաբաղի համար վտանգներով լի փաստաթուղթ է, եւ որ առանց հանրաքուէի այն չի կարող արտայայտել համայն հայութեան կամքը: Մնացեալը հասարակութեան ու սերունդների դատելիքն է», -

գրել է Մուսինեանը՝ յաւելելով. - «Ըստ այդմ, քանի որ բանավէճը հրապարակային է, Տէր-Պետրոսեանն այլ-եւս Սարգսեանի հետ առանձնազրոյցի անհրաժեշտութիւն չի տեսնում»:

Յիշեցնենք, որ նախագահ Սերժ Սարգսեանը պատրաստակամութիւն էր ցուցնել առանձնազրոյց ունենալ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելից համահայկական հռչակագրի վերաբերեալ, որն առաջին նախագահը քննադատել էր իր ելույթներից մէկում:

Իսկ աւելի վաղ Տէր-Պետրոսեանը Սերժ Սարգսեանին ուղղուած բաց նամակ էր հրապարակել՝ նշելով, որ մինչեւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գագիկ Մառուկեանի հասցէին Սերժ Սարգսեանի աղմուկահարուց ելույթը պատրաստ էր նրա հետ դէմ առ դէմ հանդիպելու՝ «նրա նախընտրած ժամկէտներում եւ պայմաններում» Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի հռչակագրի շուրջ մտքերի փոխանակման նպատակով:

ԲՀԿ-ի Արտահերթ Համագումարը Մարտի 5-ին

Մարտի 5-ին կը կայանայ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան 8-րդ համագումարը: Այս մասին յայտնեցին NEWS.am-ի աղբիւրները:

Սեր տեղեկութիւններով՝ համագումարում կը քննարկուի եւ որոշում կը կայացուի ԲՀԿ-ի յետագայ գործունէութեան մասին: Ամենայն հաւանականութեամբ, հենց այդ ժամանակ էլ Գագիկ Մառուկեանը կը յայտարարի ԲՀԿ ղեկավարի պաշտօնից հրաժարուելու մասին, կը կայանայ ԲՀԿ ղեկավարի ընտրութիւնը:

Նշենք, որ ԲՀԿ-ՀՀԿ առձակատուովից, այնուհետեւ հաշտեցումից յետոյ կուսակցութիւնից սկսուել է մասսայական արտագաղթ: ԲՀԿ-ից

դուրս գալու ու որպէս անկախ պատգամաւոր գործունէութիւն ծաւալելու մասին արդէն յայտարարել է Արագած Ախոյեան, Կարօ Կարապետեանը, Յարութիւն Ղարաբէօզեանը, Գրիգորի Մարգարեանը, Դաւիթ Քոչարեանը: Մէկ այլ ԲՀԿ-ական պատգամաւոր՝ Մելիք Մանուկեանը, սխալմամբ մանդատից հրաժարուելու դիմում էր գրել, սակայն առաջիկայում պատրաստուած է հետ վերցնել այդ դիմումը եւ պարզապէս դուրս գալ ԲՀԿ-ից՝ խմբակցութեան կազմում մնալով որպէս անկախ պատգամաւոր: Որոշ տեղեկութիւններով՝ ԲՀԿ-ից դուրս գալու մտադրութիւն ունեն նաեւ Ռուստամ Գասպարեանը, Մուշեղ Պետրոսեանը, Մարտուն Գրիգորեանը:

Փաշինեան. «Այսօր Տեղի Է Ունենում Բաղաքական Դաշտի Բաժանման Պրոցես»

Իշխանափոխութիւն պահանջող ուժերն արդէն երկրորդ անգամ չեն միանում պատգամաւոր Նիկոլ Փաշինեանի նախաձեռնած՝ նախագահ Սերժ Սարգսեանին պաշտօնանկ անելու գործընթացին:

Դեռեւս նախորդ տարի շրջանառութեան մէջ դրուած փաստաթղթում Փաշինեանը իմպիչ-մենտը հիմնաւորող 9 դրուակ էր նշել՝ «Մարտի 1»-ի գործով Փաստահաւաք խումբը ցրելուց մինչեւ Գործ կոստանեանին գլխաւոր դատախազ նշանակելը: Վերջին ներքաղաքական իրադարձութիւններից յետոյ նախագիծը համալրուեց եւս մէկ կէտով: Փաշինեանի համոզմամբ՝ իմպիչմենտի հիմքերի ցանկը կարելի է երկար շարունակել:

«Ազգային ժողովում ասում էին, որ 2011 թուականի Նոյեմբերի 25-ին Ազատութեան հրապարակում Հայ Ազգային Գոնկրէսը, այդ հանրահաւաքին ես էլ եմ ներկայ եղել, հրապարակել է հռչակագիր Սերժ Սարգսեանի պաշտօնանկութեան իրաւաքաղաքական հիմքերի մասին, եւ ինձ մեղադրում են, որ այդ հռչակագիրը ես անտեսել եմ եւ փաստաթղթում չեմ ներառել այդ հզորագոյն փաստարկները: Այդ հռչակագիրը եր-

կու էջից է բաղկացած, եւ այդ հռչակագրի 6-րդ կէտում որպէս Սերժ Սարգսեանի պաշտօնանկութեան հիմք նշուած է փորձագէտների Փաստահաւաք խմբի ապօրինի լուծարումը:

«Սեր ներկայացրած փաստաթուղթը տարբեր կէտ ունի: Եթէ այդ կէտերից գոնէ մէկը հիմնաւոր է, այն միւսները անհիմն են, կարելի է Սերժ Սարգսեանին պաշտօնանկ անել, օրէնքն է դա ասում, եւ այս պայմաններում, ներողութիւն եմ խնդրում, այդ քաղաքական կրուտիտները արդէն իսկ պաշտօնազատութեան կարիք չունեն», - ասաց Փաշինեանը:

Անդրադառնալով Սերժ Սարգսեան - Գագիկ Մառուկեան առձակատմանը, պատգամաւորը կարծիք ցայտնեց, որ ի սկզբանէ տեղի է ունենում քաղաքական դաշտի բաժանման պրոցես:

«Այն պրոցեսը, որ այսօր տեղի էր ունենում, դա այսօրուայ մասին էր, դա 2017-2018 թուականների իշխանութիւնը կիրառելու, բաժանելու մասին էր, եւ տեղի ունեցաւ հենց դա, որ Սերժ Սարգսեանը որոշեց, որ այդ հարցերը ոչ թէ թողնի հասնեն 2017-2018 թուական, այլ լուծի այսօր», - ասաց Փաշինեանը:

Նոր Զարգացումներ «Մարտի 1»-ի Գործի Քննութիւնում



Արխիւային նկար. Երեւանի մէջ քաղաքացի մը կը պարզէ Մարտի 1-ի սպանդին մասնակցած օրիկարիսներու նկարները:

2008 թուականի «Մարտի 1»-ի գոհերի գործով նոր զարգացումներ են տեղի ունեցել: Վերջին օրերին տուժողի իրավայաջորդները ծանուցագրեր են ստանում եւ հրաւիրուած Յատուկ քննչական ծառայութիւն: Ինչպէս դեռեւս անցած տարուայ Նոյեմբերին խոստացել էր գլխաւոր դատախազ Գէորգ Կոստանեանը, գոհուածների գործերը քննուած են առանձին վարույթներով՝ նոր քննիչների կողմից:

Օրեր առաջ Յատուկ քննչական ծառայութիւն են կանչել մարտի 1-ի գոհերից Գոռ Քլոյեանի հորը՝ Մարգիս Քլոյեանին ու հարցաքննել նրան: Նոր քննիչի արձանագրութիւնը մտորելու տեղիք է տուել Քլոյեանին:

«Ես կարդացի, որ յատուկ միջոցների ոչ ճիշդ օգտագործելուց յետոյ տեղի է ունեցել գոհեր: Ստեղ հարց է առաջանում՝ եթէ դուք չգիտէք, թէ ովքեր են սպաննել մեր երեխաներին, ապա ինչպէս գիտէք, որ ներքին գործերի ոստիկանութիւնը ճիշդ չի օգտագործել կամ անզգոյշ է օգտագործել», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Քլոյեանը:

Արդէն 7 տարի արդարադատութեան սպասող գոհուածների հարազատները նոր քննիչների ու առանձին վարույթներով գործերը քննելու գլխաւոր դատախազի որոշմանը լուրջ չեն վերաբերում: Մարգիս Քլոյեանն ընդգծում է՝ նախկին գլխաւոր դատախազ Աղվան Յովսէփեանն ու բարձրաստիճան այլ պաշտօնեաններ էլ տարբեր առիթներով յայտարարել են, որ «Մարտի 1»-ի էջը փակուած է, յանցագործութիւններ էլ՝ բացայայտուած:

Մարգիս Քլոյեանի խօսքով, դատախազութիւնն այս կերպ մտահոգութեան իմիտացիա է ստեղծում, քանի որ իշխանութիւնը երբեք չի կտրի այն ճիւղը, որի վրայ նստած է:

«Բոլոր գործերը բացայայտուած են, ամէն ինչն էլ իրենք գիտեն՝ ովքեր են սպաննողները, մեղաւորները, հրաման տուողները», - ասաց Մարգիս Քլոյեանը:

Յատուկ քննչական ծառայութիւնից ծանուցագրեր է ստացել նաեւ գոհուած Արմէն Ֆարմանեանի հայրը՝ Վաչագան Ֆարմանեանը: Վերջինս, սակայն, հարցաքննութեան չի էլ հրաւիրուել:

Հայաստանի Տնտեսական Աճը Կարող Է Ծրագրուածից 10 Անգամ Ցածր Լինել

Հայաստանի Կենտրոնական բանկի՝ Փետրուարի 20-ին հրապարակած «Գնաճի հաշուետուութիւն» զեկոյցում նշուած է, որ տնտեսական աճը 2015 թուականին զնահատուած է 0.4-2 տոկոս: Մինչդեռ կառավարութիւնը պետպիտոճէով ծրագրել է այս տարի ապահովել 4.1 տոկոս տնտեսական աճ:

Հայաստան եկած տրանսֆերտները 2014-ին 2013 Կենտրոնական բանկի կանխատեսումների համաձայն, կը նուազեն 30 տոկոսով: Սպասուող անկումը, տնտեսագէտների կարծիքով, չի կարող բացասական ազդեցութիւն չունենալ տնտեսութեան, ֆինանսական համակարգի վրայ, քանի որ Հայաստանի եկող արտարժուէթի մեծ մասը գալիս է հենց տրանսֆերտների տեսքով:

Եթէ 2014-ին Հայաստանից ողջ արտահանումը 1.5 միլիարդ էր, ապա տրանսֆերտները կազմել էին 2.1 միլիարդ:

«Իրականում Կենտրոնական բանկի տուեալները կարող են բաւականաին լաւատեսական լինել», - ասաց տնտեսագէտ Վահագն Խաչատրեանը: - «Իսկապէս Հայաս-

տանը գտնուած է ճգնաժամի մէջ, եւ մենք զրո տոկոս էլ չենք կարող ունենալ: Ես անցեալ տարի էլ էի ասում՝ եթէ մենք կարողանանք զրո տոկոս ուղղակի ունենալ, մենք պէտք է գոհ եւ շնորհակալ լինենք: Որովհետեւ այն, ինչ որ տեղի է ունենում Հայաստանի Հանրապետութիւնում այսօր տնտեսական առումով, որեւիցէ դրական, խոստումնալից բան չկայ»:

«Այս տարուայ արդիւնքներով միանշանակ է, որ աղքատների թիւը Հայաստանում կ'աճի», - շարունակեց Խաչատրեանը: - «2015 թուականի արդիւնքներում իրականում արդէն կարող ենք մտենալ աղքատութեան 40 եւ մի քիչ աւելի տոկոսի: Սա շատ յստակ է: Ուղղակի վարուող տնտեսական քաղաքականութիւնը բերում է հենց սրան՝ աղքատութեան մեծացում: Բերում է նրան, որ իրականում այն մարդիկ, ովքեր իշխանութեան մօտ են կանգնած, կուտակում են գումարներ, բայց, ցաւոք սրտի, այդ գումարները կուտակուած են ոչ թէ տնտեսութեան աճի հաշուին, այլ այդ գումարները կուտակուած են ժողովրդի աղքատացման հաշուին»:

ՀԱՆ Կը Ջօրակցի Խուճք Մը Թեկնածուներու Լոս Անճելըսի Քաղաքապետական Ընտրութիւններուն

Մարտ 3-ին տեղի ունենալիք Լոս Անճելըս քաղաքային ընտրութիւններուն առթիւ, Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) հրապարակեց իր զօրակցութիւնը վայելող թեկնածուներու ցանկը:

Այս առթիւ հրապարակուած յայտարարութեան մէջ ՀԱԽ կը տեղեկացնէ, որ զօրակցութիւն յայտնելով այս թեկնածուներուն, նկատի առնուած են անոնց նուիրումը հանրային ծառայութեան, անոնց անցեալի գործունէութիւնը եւ ապագայ ծրագիրները՝ քաղաքի զարգացման ուղղութեամբ:

«Միացեալ Նահանգներու տարածքին որպէս ամենէն հայաշատ քաղաքը, տասնամեակներէ ի վեր Լոս Անճելըսի մէջ կ'ապրին հարիւր հազարաւոր հայեր, որոնք կը կազմեն կարեւոր մէկ մասնիկը այս բազմազգ եւ բազմակրօն քաղաքին, հետեւաբար մեր պարտականութիւնն է օգտագործել մեր քաղաքացիական իրաւունքները՝ մասնակցելով ընտրութիւններուն», - այս առթիւ յայտարարեց ՀԱԽ-ի ատենապետ

Սեւակ Խաչատուրեան:

Հետեւեալ թեկնածուները պատրաստակամութիւն յայտնած են գործակցելու Ամերիկահայ Համայնքին հետ եւ հետեւաբար արժանացած են ՀԱԽ-ի զօրակցութեան եւ աջակցութեան:

Լոս Անճելըսի Քաղաքապետական Խորհուրդ

Ընտրաշրջան 2 Փոլ Գրիգորեան

Ընտրաշրջան 6 Նուրի Մարթինէզ

Ընտրաշրջան 10 Հըրպ Ուէսըն

Ընտրաշրջան 12 Միթչըլ Էլէնտըր

Ընտրաշրջան 14 Հոգէ Հուրպար

Լոս Անճելըսի Համայնքային Գովէճ

Ընտրաշրջան 1 Անտրա Հոֆֆմըն

Ընտրաշրջան 3 Սէմ Կպուշեան

Ընտրաշրջան 5 Սքոթ Սվոնքին

Լոս Անճելըսի Ուսումնական Խորհուրդ

Ընտրաշրջան 5 Պէննէթ Քայլը

Ռիտանո Պիչի մէջ Սեմ Քարթունեանի

Մարտ 3-ին, ծովեզերեայ շրջանի Ռիտանո Պիչ քաղաքէն ներս տեղի պիտի ունենան Քաղաքապետական Խորհուրդի ընտրութիւններ: Այս ընտրութիւններուն որպէս թեկնածու ներկայացած Սէմ Քարթունեանը:

Սէմ Քարթունեան գործարար անձնաւորութիւն մըն է, որ աւելի քան 20 տարի գործած է քաղաքի տարբեր հասարակական կազմակերպութիւններուն մէջ: Ան ըլլալով Ամերիկահայ, մօտէն ծանօթ է հայութիւնը յուզող հարցերուն եւ պատրաստ է օգտակար հանդիսանալ հայ համայնքին:

Հայ Ամերիկեան Խորհուրդը իր զօրակցութիւնը յայտնած է Քարթունեանին:



Ջօրակցութիւններ Փաստինայի Ընտրութիւններուն



Հայաշատ Փաստինայի մէջ Մարտ 10-ին տեղի ունենալիք տեղական ընտրութիւններուն եւս, ՀԱԽ իր զօրակցութիւնը յայտնած է իսումբ մը թեկնածուներու:

Քաղաքապետի պաշտօնին համար ՀԱԽ կը զօրակցի Թէրի Թորնիքին, որ երկու անգամ ընտրուած է քաղաքապետական Խորհուրդի անդամ՝ 2009-ին եւ 2013-ին: Ան երկար տարիներ վեր մեծ ծառայութիւններ մատուցած է քաղաքին եւ համայնքին:

Քաղաքապետական Խորհուրդի ընտրութիւններուն ՀԱԽ իր զօրակցութիւնը կը յայտնէ երկրորդ ընտրաշրջանէն թեկնածու Մարկարէթ ՄաքՕսթընին եւ չորրորդ ընտրաշրջանէն ձին Մասուտային:

ՀԱԽ կը զօրակցի նաեւ Փաստինայի Ուսումնական Խորհուրդի անդամութեան թեկնածու Ռոյ Պուրլուրճեանին, որ կը ներկայանայ երկրորդ ընտրաշրջանէն:

ԲՈՂՈՔ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԺԻՏՈՂԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿԻՆ ԴԵՄ



Ֆրանսայի մէջ, Ալիէւեան խմբակը անգամ մը եւս համարձակութիւնը ունեցաւ կազմակերպելու վատահամբաւ եւ նենգաւոր ձեռնարկ մը:

Այս անգամ, Փարիզի Դրոթադամասի, «Ալտար» թատերասրահին մէջ, European Azerbaijan Society (TEAS)-ն կազմակերպած էր «Խոճալուի Զարդերուն» ոգեկոչումը:

Իրենց բեղրոտարներով, ազերիները կը կարծեն թէ օտար ափերու վրայ կրնան հաստատուիլ սփռւած բնակարարի վիճակով մը:

Բաց, այս տարի իրավիճակը տարբեր էր: Ոգեկոչումին ներկայ էին փոքրաթիւ անձեր:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան, Նազարէկ Երիտասարդական Միութեան անդամները ներկայ էին հոն, արտայայտելու համար իրենց ընդվզումը այս ժխտողական ձեռնարկին դէմ: Ինչպէս նաեւ սատար կանգնելու համար Լէյլա Եոլունուսի, մարդկային իրաւանց պաշտպանին, որ բանտարկուած կը մնայ Յուլիս 2014էն ի վեր, զոհը ազերի հալածանքին, եւ նաեւ սատար բոլոր անոնց որոնք ենթարկուած են անվերջ պատերազմին ճնշումին, որ պատանդ կը բռնէ հայ ու ազերի բնակչութիւնը, ի շահ Ալիէւեան

խմբակին:

Նազարէկի ցուցատախտակներուն վրայ արձանագրուած էր հետեւեալը, «Ալիէւ կը չարչարէ, Ալիէւ կը բանտարկէ, Ալիէւ կ'իւրացնէ եւ Փարիզի մէջ պզտիկ ձեռնարկ կը կազմակերպէ»: «Ես, Լէյլա Եոլունուս եմ, ՄԴՀԿ Նազարէկ Երիտասարդական, իսոսքի ազատութեան Չատագով» «Ֆրանսան ծախու չէ, Ատրպէյճան թող չփորձէ գայն գնել»:

Նոյն ժամանակ, տեղի ունեցաւ անցորդներուն թուուցիկներու բաժանում:

Երբ Ատրպէյճան կը փորձէ պատմութիւնը խեղաթիւրել, դահիճը զոհին տեղ դնելով, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Նազարէկ Երիտասարդական Միութիւնը, Ուրբաթ, Փետրուար 27, 2015ին, ժամը 20:30ին, «Հայ Երիտասարդական Կեդրոն», Ալֆորվիլի իր կեդրոնատեղիին մէջ կը կազմակերպէ հանդիպում, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան ներկայացուցիչ, Պարոն Յովհաննէս Գէորգեանի հետ, ոգեկոչելու համար Սումկայիթեան Չարդերու զոհերուն յիշատակը, որոնք տեղի ունեցան Փետրուար, 27, 28, 29, 1988ին:

Փարիզ, Փետրուար 23, 2015, ՄԴՀԿ Նազարէկ Երիտասարդական Միութիւն

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԵԳԻՊՏՈՍ

15 ՀԱԶԱՐ ԵԳԻՊՏԱՅԻՆԵՐ ԼԻՊԻԱՅԵՆ ՀԵՌԱՅԱՆ

Մօտ 15 հազար եգիպտացիներ լիպիական սահմանը կտրելով անցան Եգիպտոս: Այս արտագաղթը կապ ունէր անցեալ շաբթուան ընթացքին 21 դպրիներու սպանութեան հետ: Արդարեւ անոնք որպէս քրիստոնեաներ զոհ գացած էին իսլամիստ ծայրայեղականներու կողմէ կազմակերպուած ջարդին: Իր հերթին եգիպտական բանակի օդուժը հարուածած էր Տահէշականներու թիրախները: Այս առթիւ Եգիպտական իշխանութիւնները կոչ ուղղած էին իրենց հպատակներուն լքել երկիրը: Անոնք յատուկ սուսանակներով վերադարձան Եգիպտոս, ուր իշխան Նոյնիսկ Թուրուզէն վերադարձան իրենց տունները: Նշենք նաեւ որ վերջին շրջաններուն մօտ մէկ ու կէս միլիոն եգիպտացիներ կ'աշխատէին Լիպիոյ մէջ մեծ մասամբ շինարարութեան եւ այլ ծառայողական մարզերու մէջ:

Միւս կողմէ ներման միջազգային կազմակերպութիւնը դատապարտած էր եգիպտական օդուժի ուժեղացումները Լիպիոյ վրայ:

ԼԻԲԱՆԱՆ

ՄԱՐՏԸ՝ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒԻ ԱՄԻՍ

Ֆրանսախօս երկիրներու շարքին Մարտ ամսուան ընթացքին Լիբանանի մէջ պիտի նշուին յատուկ միջոցառումներ նուիրուած Ֆրանսերէն լեզուին եւ մշակուցին: Այս յայտարարութիւնը կատարեց Լիբանանի մշակուցի նախարարը, ազգային թանգարանին մէջ Ֆրանսայի դեսպանին հետ կազմակերպուած մամուլի ասուլիսի ընթացքին:

Արդարեւ, մշակուցի նախարար Ռէյմոնտ Արէյժին նշեց՝ որ ծրագրի ընթացքին նախատեսուած են մարզական եւ մշակութային միջոցառումներ, փառատուն մը, թատերական ներկայացումներ եւ ֆրանսական շարժապատկերի ցուցադրութիւններ:

Այս առթիւ Ֆրանսայի դեսպան Փաթրիս Փաօլին ընդգծեց՝ որ ֆրանսական թեքում ունեցող «Ֆրանզօֆօն ամիս»ը, որ առիթ մըն է երկու երկիրներու միջեւ յարաբերութիւններու ամրապնդումին, զոր կը գոյատեւէ երկար ատենէն ի վեր»:

ՄԵՐ ՈՒՍՏԸ

(Հայ-Թրքական Արձանագրութիւններու ԴՅ Ազգային Ժողովէն Կանչուելուն Առթիւ)

Հայ-թրքական արձանագրութիւնները ետ կանչուեցան ՀՀ ազգային ժողովէն: Վեց տարիներ առաջ միջազգային «օրհնութեան» շղարշով ճանապարհ ելած այդ արձանագրութիւնները այսօր ոչ միայն կորսնցուցած են իրենց ուժականութիւնը, այլ նաեւ կը գտնուին անցեալին պատկանելու հանգամանքներուն դիմաց: Թէ ինչ պայմաններու տակ այդ արձանագրութիւնները կայացան, տակաւին յստակ չէ:

Վտանգաւորն այն էր, որ հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման ճանապարհին եղած այդ արձանագրութիւնները դարձան իսկական բեռ եւ ստեղծեցին պառակտող իրավիճակ մը: Այս առումով կարեւոր սահմանափակումներ կատարելով մեր ընկերներուն եւ համակիրներուն հարկ կը համարենք չիշեցնել, որ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը բաւական երկար տեւած քննարկումներէ ետք, իր ժխտական կեցուածքը արտայայտեց սոյն արձանագրութիւններուն առընթեր: Իրենց կարգին ՀՀ իշխանութիւնները նպատակադրեցին այս հարցով ուղղակի շփման մէջ մտնել սփիւռքահայութեան տարբեր խաւերուն հետ: Մեր կուսակցութեան որոշումով Հնչակեան շարքը սփիւռքի տարբեր հայազտութիւններու մէջ մասնակցեցաւ արձանագրութեանց դէմ եղող «Ո՛չ» շարժումին: Իշխանութիւնները մնացին անդրդուելի եւ նախնական ստորագրութիւնները կայացան 10 Հոկտեմբեր 2009-ին: Անկէ ետք տեղի ունեցած բոլոր գործընթացները անգամ մը եւս լոյսին բերին Թուրքիոյ դարանակալ եւ խորամանկ մօտեցումները: Նոր պահանջներու աւելացում եւ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու բնականոնացման առընթեր Արցախեան հարցին մէջ Ատրպէյճանի կողմէ առաջ քաշուած պայմաններով հիմնախնդրի լուծում:

Այս դէպքերու ընդհանուր հորովոյթին մէջ ամէնէն արագ եւ ամենէն ուղենշային կեցուածք ունեցողը եղան ՀՀ իշխանութիւնները: Անոնք ըմբռնեցին, որ Սփիւռքը ճիշդ էր իր դիտարկումներուն մէջ: Եւ այսօր ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի անցեալ Մայիսին ՄԱԿ-ի ամպիոնէն արտասանած խօսքէն ետք, ահա այդ արձանագրութիւնները ետ կը կանչուին ՀՀ ազգային ժողովէն:

Ընկերներ, Մեր կուսակցութեան պատմութեան յարիւր կեցուածքով մենք չեղանք այն ուժը, որ քննադատեցինք ՀՀ իշխանութիւնները յանուն քննադատութեան: Աւելին մեր խօսքին մէջ չարութիւն չկար: Կար ներազգային կամք լսելի դարձնելու իրաւագործի, նախճիւրի ու գաղթի ականատես եղած այն հարաւոր հայորդիներու մնացորդացին ձայնը, որոնք պատմական թելադրականութեամբ իրենց ապրած փորձառութեամբ կ'ուզէին հաստատել, որ իրենց ճանչցած Թուրքիան, որպէս պետական համակարգ ցարդ կը մնայ անփոփոխ: Աշխարհով մէկ սփռուած հայորդիները կը խօսէին պատմական փորձառութեան թելադրանքով: Անոնք տեսած են Թուրքիոյ եաթաղանը: Ճաշակած են անոր աննկարագրելի ոճիւրները: Եւ որպէս արեւմտահայոց դատի իրաւատէր պաշտպաններ ըսելիք ունէին այդ առումով:

Սխալ չհասկցուինք: Մեր կուսակցութեան համար գերագոյն եւ սրբութիւն սրբոց դարձած Հայաստանը տեղ ունի գարգանալու: Ան պէտք է դառնայ այնպիսի հզօր ուժ ներկայացնող պետականութիւն, որուն հետ բանակցութիւն կատարել ցանկացող եւ տարբեր ճամբաներով հրապարակ ելած նոյն Թուրքիան լաւ ըմբռնէ, որ պետական շահերէն անդին եւ պատմական փորձութեան ու անցեալի սխալներուն առջեւ մեղայի դալը կարեւոր է ու անյետաձգելի:

Այս հիմունքները սոսկ բարացուցական խնդիրներ չեն, այլ ճանապարհային ցանկացած քարտէջի մէջ ըլլալիք իմաստներ, որոնք կը բխին մեր ժողովուրդի արժանապատուութեան հիմքերէն:

Այսօր մեր Հայրենիքը կ'ապրի դժուարին ժամանակներ, բաց մեզի համար մեր նահատակներուն աւանդն ու ոգեղէն ժառանգութիւնը կը մնան անձեռնմխելի: Այստեղ է, որ Հայաստանի իշխանութիւնները պէտք է ճիշդ գնահատեն իրադրութիւնները եւ սխալներ թող չտան ապագային կիրարկուելիք գործնական քայլերուն մէջ:

Այստեղ պէտք է նաեւ գնահատել Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցի կեդրոնական մարմինին կողմէ հրապարակուած հռչակումը:

Շար.ք էջ 18

ՀԱՄԱՄԻՏ ԵՄ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՍՕՏԵՑՈՒՄՆԵՐԻՆ, ԲԱՅՑ ՉԵՍ ԿԱՐԾՈՒՄ, ԹԵ ՀՐԴԱԿԱԳԻՐԸ ՍԽԱԼ Է. ՀԱՄԲԻԿ ՍԱՐԱՖԵԱՆ

«Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի» բովանդակութիւնը ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը որակում է խաչտառակ մի փաստաթուղթ՝ ընդգծելով նրա վերախմբագրման եւ միջազգային իրաւունքի նորմերին եւ պետութիւնների ու ժողովուրդների համակեցութեան սահմանուած կանոններին համապատասխանեցման անհրաժեշտութիւնը:

Տէր-Պետրոսեանը Սերժ Սարգսեանին ուղարկած յայտնի բաց նամակում յայտարարում է, որ փաստաթղթի պատճառով Հայաստանը ոչ միայն չի շահի միջազգային հանրութեան համակրանքը, այլեւ կը կորցնի անգամ բարեկամ պետութիւնների աջակցութիւնը:

Առաջին նախագահն առաջարկում է խորհրդակցական յանձնաժողովի կազմում ընդգրկել այնպիսի անձանց, ովքեր արդէն իսկ ապացուցել են, որ ունակ են վերկանգնել աւանդական պատկերացումներից եւ իրերը դիտել Հայաստանի պետական շահերի ու ժամանակակից աշխարհի որդեգրած սկզբունքների դիտանկիւնից:

Ի թիւս այլ մարդկանց՝ Լեւոն Տէր-Պետրոսեանն առաջարկում է յանձնաժողովում Միացեալ Նահանգներից ընդգրկել ՄԴՀԿ Կենտրոնական վարչութեան անդամ Համբիկ Սարաֆեանին:

Մեզ հետ զրոյցում, սակայն, Սարաֆեանն ընդգծեց, որ ընդհանուր առմամբ դէմ չէ ներկայացուած՝ «Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրին»:

«Առաջին լրատուական»-ի հարցին, թէ ի՞նչ կարծիք ունի հռչակագրի վերաբերեալ առաջին նախագահի յայտնած մտահոգութիւնների մասին՝ Համբիկ Սարաֆեանը պատասխանեց՝ «Հռչակագիրը բոլոր կողմերի մասնակցութեամբ եղաւ եւ մի քանի անգամ խմբագրուեց: Ես՝ անձնապէս, վիճելի հարցեր չեմ տեսնում: Դա դեկլարատիւ բնոյթ ունի եւ առաջին քայլն է Հայաստան-Սփիւռք տեսանելի ձեւաչափ սկսելու կամ գոնէ այդ ձեւաչափի սկիզբը դնելու համար: Անշուշտ, հռչակագրից դուրս այն մտահոգութիւնները, որ կան Յեղասպանութեան հարցի արձարձման, Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների վերաբերեալ, շատ լուրջ բաց հարցեր են, եւ դրանց մասին Տէր-Պետրոսեանն էլ



է բարձրաձայնում իր նամակում: Ես կարծում եմ՝ նրա այդ նկատառումները ճիշտ են, եւ կան հարցեր, որ պէտք է անպայման քննարկուեն», - ասաց մեր զրուցակիցը:

Մանրամասնելով իր միտքը՝ Սարաֆեանն ընդգծեց, որ հիմնական շեշտը պէտք է դրուի այն հանգամանքի վրայ, որ Հայաստանը որպէս պետութիւն պէտք է ունենայ յստակ մօտեցում ու յստակ քաղաքականութիւն իր հարեւանների հետ: «Յեղասպանութեան հարցի արձարձումը պարզապէս յայտարարութիւն չպէտք է լինի, չպէտք է պարզապէս յայտարարել, որ Թուրքիան պէտք է ընդունի Հայոց Յեղասպանութիւնը: Եթէ չունենանք յստակ արտաքին քաղաքականութիւն, ապա աւելի մեծ վնաս կը հասցնենք Հայաստանին, քան ինչ-որ օգուտ կը տանք», - ընդգծեց Համբիկ Սարաֆեանը:

Մեր զրուցակիցը եւս մէկ անգամ շեշտեց, որ հռչակագրի բովանդակութեանն ինքը դէմ չէ. «Մեր կուսակցութիւնն էր մասնակցութիւնն է ունեցել այս հարցում, դէմ չեմ, սակայն ես չեի ցանկանայ «դէմ»-ի կամ «կողմ»-ի մասին խօսել: Հռչակագիրը մէկ անհատի յայտարարութիւն չէ՝ կոնսենսուսով ստեղծուած յայտարարութիւն է, եւ պարզ է, որ այնտեղ կան կէտեր, որ մեր կուսակցութիւնը կը ցանկանար շեշտադրել կամ, ասենք, ուրիշ հարցեր էլ ներառել: Բայց ասել, թէ համարում եմ՝ սխալ է՝ այդպիսի բան լինել չի կարող»:

Միեւնոյն ժամանակ, Համբիկ Սարաֆեանն ասաց, որ կան հարցեր, որոնք եւս կարեւոր են եւ հռչակագիրը հրապարակելով չեն վերանում: «Ամենակարեւորը հա-

Շար.ք էջ 18

Advertisement for Bedros S. Maronian and Siamanto B. Maronian insurance services. Includes contact info, list of services (Life, Health, Estate Planning, etc.), and logos for various insurance providers like New York Life, Anthem, BlueShield, Aetna, Health Net, CIGNA, Kaiser Permanente.

ԻՇԽԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԲՈՒՆԱՏԵՐ ԴԱՍԱԿԱՐԳԻՆ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵԻ ԴԱԻԹԵԱՆ

his family. Along with his surviving family, he was sent on what would become the death march of men, women and children across the Syrian desert to concentration camps. But a Turkish man had pity on this little boy. He rescued him and placed him in an orphanage. He never saw his family again. My grandmother Malvine also lived in Turkey. Her father was poisoned in the genocide and because she had too many siblings for her mother to handle, she was given away to another family to be raised by them. As surviving Armenians were deported

Continued on page 4

Office Space for Lease
ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
 1060 North Allen Ave Pasadena, CA 91104
 Գրասենյակները վերանորոգուած
 Եւ յարմար վարձքերով
 հեռաձայնել՝ (626) 398-0506

Dr. Rouben Adalian's Exhibit and Lecture at the Western Diocese



BURBANK — “The First Refuge and the Last Defense: The Armenian Church, Etchmiadzin, and the Armenian Genocide” was the title of Dr. Rouben Adalian’s exhibit which was presented at the Zorayan Museum of the Western Diocese on February 18th and 19th at 8:00 p.m.

More than 160 guests were in attendance on the opening night of the exhibition. On behalf of the Zorayan Museum Committee, Vice-Chair Mrs. Lena Simonian welcomed the guests and acknowledged the presence of His Eminence Archbishop Vatche Hovsepian, the reverend clergy, and Mr. Antranik Zorayan, the benefactor of the Zorayan Museum. Mrs. Simonian reflected on the number of exhibitions that had been on display at the Museum throughout the years including those of Pinajian, Carzou, Karanfilian and others.

Rev. Fr. Khajag Shahbazyan read the message of the Diocesan Primate Archbishop Hovnan Derderian commending the invaluable contributions of Dr. Rouben Adalian towards the recognition of the Armenian Genocide in his capacity as the Director of the Armenian National Institute in Washington, D.C.

Remarks were also delivered by Rev. Fr. Vazken Movsesian, the Chair of the Centennial Commemoration Committee of the Western Diocese. “Today’s exhibition is a testament of God’s divine love and the indomitable spirit of the Armenian people. We are the torchbearers of the legacy of our 1.5 million fallen ancestors. They were martyred for their Christian Faith. Today, we pay homage to their memory with great reverence,” stated Rev. Fr.

Movsesian. The Rev. Fr. then introduced Dr. Adalian, the lecturer of the evening.

The Director of the Armenian National Institute expressed his gratitude to the Primate and the members of the Zorayan Committee for the warm welcome and gracious hospitality.

In his lecture, Dr. Adalian spoke in great detail about the influential role of H.H. Gevorg V Surenyants, the 127th Catholicos of All Armenians in voicing the injustice perpetrated against the Armenian people. During the Armenian Genocide, the Head of the Armenian Apostolic Church sent numerous letters to world leaders informing them about the catastrophic events taking place in Western Armenia. His Holiness, with the assistance of the intellectual community, was instrumental in transforming the Gevorkian Theological Seminary into a hospital and later, an orphanage for those starving, ailing, diseased refugees from the City of Van who had somehow managed to escape the horror of the Armenian Genocide.

Following his lecture, Dr. Adalian answered questions from the audience.

Consisting of 20 panels with over 150 historic photographs documenting the role of the Armenian Church during the Armenian Genocide, the exhibit was created by the Armenian National Institute (ANI), the Armenian Genocide Museum of America (AGMA) and Armenian Assembly of America jointly, and in cooperation with the Mother See of Holy Etchmiadzin, the Armenian Genocide Museum Institute in Yerevan, and the Republic of Armenia National Archives.

Pope Francis Declares

Continued from page 1

his reservations that he was too young for the task, the commentary became famous for its clarity of thought and language and its excellence of theological presentation.

He also wrote a number of famous letters, sharagans, treasures, odes, melodies, and discourses. Many of his prayers are included in the Divine Liturgy celebrated each Sunday in Armenian Churches around the world.

St. Gregory’s masterpiece is considered to be his Book of Lamentations. Also known as Narek, it is comprised of 95 prayers, each of which is

titled “Conversation with God from the depth of the heart.” A central theme is man’s separation from God, and his quest to reunite with Him. St. Gregory described the work this way: “Its letters like my body, its message like my soul.” He called his book an “encyclopedia of prayer for all nations.” It was his hope that it would serve as a guide to prayer for people all over the world. After the advent of movable type, the book was published in Marseille in 1673, and has been translated into at least 30 languages.

St. Gregory of Narek is remembered by the Armenian Church in October of each year.

Broadcast Premiere of Archaeological Show Digging into the Future – Armenia on select PBS stations in April 2015



LOS ANGELES — Digging into the Future – Armenia will premiere on select PBS stations in April as part of the commemoration of the 100th Anniversary of the Armenian Genocide.

Hosted by Joseph Rosendo, Digging Into The Future is produced by the Emmy-winning team behind the PBS series, Joseph Rosendo’s Travelscope®. Joseph joins archaeologists from UCLA’s Cotsen Institute of Archaeology on a journey through Armenia. During this archeological adventure Joseph crisscrosses Armenia to ancient sites where some of the world’s oldest artifacts have been discovered. Every site offers viewers insights into how the Armenians of the distant and near past lived – and what is discovered about the past serves the present. In keeping with the show’s focus on cultural connections, Joseph meets modern-day Armenians in roadside fruit stands, riverside wine stalls, bustling markets and is welcomed into their homes to witness traditional artisans at work and join in religious and communal celebrations that inspire, enlighten and reveal the Armenian heart and soul. While this documentary en-

compasses more than the Armenian Genocide, it is covered in the show and illustrates the resiliency of the Armenian people.

Broadcast Dates:

Chicago – WYCC

Monday, April 6, 9:00 p.m.

Tuesday, April 7, 2:00 a.m.

Los Angeles – KVCR

Thursday, April 16, 8:00 p.m.

Friday, April 17, 5:00 p.m.

Boston – WGBH/Channel 2

Sunday, April 19, 11:30 a.m.

San Francisco/Bay Area – KQED

Sunday, April 19, 6:00 p.m.

KQED

Saturday, April 25, 4:00 p.m.

KQED World

Saturday, April 25, 6:00 p.m.

KQED Plus

New York – WYNY/NYC Life

Sunday, April 19, 7:30 p.m.

Friday, April 24, 1:00 a.m.

Travelscope, LLC thanks UCLA’s Cotsen Institute of Archaeology for its academic advice and coordination on the production. Local broadcasts are made possible in part by The Armenian General Benevolent Union (AGBU) and The Kazanjian Foundation.

Israeli Scholar Yair Auron

Continued from page 1

Azerbaijan, knowing those will be used against the people of Karabakh.

“I go mad, when I think these weapons are used against you,” the scholar said.

According to Yair Auron, upon his return to Israel he will continue the struggle for the recognition of the Armenian Genocide. Besides, he will talk to his friends about Artsakh, its people and their struggle. He plans to visit Nagorno Karabakh again in summer.

On 21 February Artsakh Presi-

dent Bako Sahakian met with Yair Auron. A range of issues related to the history of the Armenian people, the Azerbaijani-Karabakh conflict settlement process and regional trends were touched upon during the meeting.

President Sahakian commended Yair Auron’s research on the history of the Armenian Genocide from academic and moral viewpoints, outlining that the professor’s works had a serious contribution to the studying and international recognition of the Armenian Genocide, as well as to cementing friendly ties between the Armenian and Jewish people.

Emmy Award Winning Composer

Continued from page 3

from Turkey, both Kourken and Malvine wound up in a refugee camp in Greece where they found each other. When she was 14 and he was 19 they married, and spent nearly 75 years together,” Gentilini said.

Gentilini noted while she has known her history for decades, she chose this year to share what her

family went through.

“In April it will be the 100th commemoration of the Armenian Genocide, and I wanted to tell the story in a different way,” she said. “There have been plays and movies and marches, but I’ve never heard a musical. I believe music is a universal language, so even those who don’t know about this time in history might be interested because the music makes it accessible.”

«ՋԵՏՔ»Ի ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԱՐՄԵՆ ԿԼՈՂ ՍՈՒԹԱՖԵԱՆԸ

Վարեց՝ ՄԵՐԻ ՄԱՍԵԱՆ

Արմէն Կլող Մուծաֆեանը ֆրանսահայ պատմաբան, հայագէտ է, Սորբոնի համալսարանի պրոֆեսորը: Նարեկացի արուեստի միութիւնում տեղի ունեցած իր դասախօսութեան ժամանակ նա տարանջատեց Սփիւռքի հայ գաղթօջախների երեք տեսակ: Առաջինը՝ քաղաքական, երբ մասնաւորապէս Յեղասպանութիւնից յետոյ հայերը այլ երկրներ են արտագաղթել, երկրորդը՝ մշակութային, որտեղ պետականութեան բացակայութեան ընթացքում հայ մշակույթը զարգացել է, եւ տնտեսական, եւ սոցիալ-տնտեսական դրութեան պատճառով մարդիկ արտագաղթում են Հայաստանից: «Ջետք»ի հարցերին պատասխանում է Արմէն Կլող Մուծաֆեանը:



Ռուսիայում այսօր էլ հայեր են, չունենալով հանդերձ պատմութեան այդքան ողբալի էջեր: Մշակույթը Հայաստանի հարստութիւնն է:

Չարգացնելու հողը կայ: Չեմ ասում, թէ մշակույթը մարդկանց ուտելիք կը տայ, բայց վերջապէս ապացոյց է, որ կարելի է զարգացնել երկիրը: Ես համոզուած եմ:

ՄԵՐԻ ՄԱՍԵԱՆ.- Երբ հայ ժողովուրդը պետականութիւն չի ունեցել, մշակույթը եւ եկեղեցին եղել են ժողովրդին միաւորող գործօններ: Արդեօք այսօր էլ դրանք միաւորում են մեզ:

Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Միշտ այդ երկու հանգամանքները կան: Ես անկեղծ ասեմ՝ աւելի շատ մշակույթի մարդ եմ, քան՝ եկեղեցու: Իմ կարծիքով՝ պէտք է աւելի մշակույթին մօտենալ եւ մշակույթին մաս կազմել: Հիմա մի քիչ բաժանուած են եկեղեցին ու մշակույթը: Օրինակ բերեմ. Աբովեան փողոցի վրայ փոքր եկեղեցի կար՝ կաթողիկէ, հիմա արդէն ընկղմուած է այդ մեծ շէնքի մէջ: Եկեղեցին՝ չասեմ մշակույթի հանդէպ յանցագործութիւն է արել, բայց արել է սխալ քայլ: Ես շատ էի սիրում այդ եկեղեցին, այդ հին սկազդեմիական շէնքը: Ես կարծում եմ՝ քանդեցին այդ շէնքը, որպէսզի եկեղեցին աւելի երեւայ, որը գուցէ իմաստ ունի, բայց բոլորովին ընկղմուեց դրա մէջ: Այսինքն, որոշ թիւրիմացութիւն կայ մշակույթի եւ եկեղեցու միջեւ:

ՄԵՐԻ ՄԱՍԵԱՆ.- Հնարաւոր է ինչ որ ձեռով ուղղել այդ թիրիմացութիւնը:

Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Մարդկանց կամքից է կախուած:

ՄԵՐԻ ՄԱՍԵԱՆ.- Ինչպէ՞ս էք գնահատում Սփիւռքի եւ Հայաստանի կապերի զարգացումը:

Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Սփիւռքի հարցը բարդացաւ: Այժմ ամէն երկրում երկու Սփիւռք կայ՝ տեղական, պատմական Սփիւռքը եւ նոր եկած Սփիւռքը, որոնք չեն հաշտուում: Սա խնդիր է: Օրինակ, վերջերս Ֆրանսիայի Նիս քաղաքում ընդհարումներ եղան տեղական հին գաղութի եւ նոր հայաստանցի գաղութի միջեւ: Սա շատ խորհրդանշական պահ էր: Խնդիրը բարդացաւ, որովհետեւ երկխօսութիւն չկայ: Բայց ես յոյսս դեռ կապում եմ Սփիւռքի մեծ գաղութների հետ, ինչպէս՝ Ֆրանսիա, Հարաւային Ամերիկա, Հիւսիսային Ամերիկա: Ի հարկէ, ողբերգութիւնը Միջին Արեւելքում է: Որոշ ձեռով Լիբանանն է դիմանում,

ՄԵՐԻ ՄԱՍԵԱՆ.- Որպէս պատմաբան եւ հայագետ, ձեր գնահատմամբ՝ այժմ պատմական ի՞նչ ժամանակաշրջանում ենք ապրում Հայաստանում:

Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Շատ դժուար հարցով սկսեցիք: Դժուար ժամանակներ են, որովհետեւ Հայաստանը պէ՞տք է գոյատեւի, թէ չպէտք է գոյատեւի: Բոլորը խօսում են, բայց որեւէ մէկը լուծում չի գտել: Ես էլ լուծում չունեմ. ո՛չ քաղաքագէտ եմ, ո՛չ տնտեսագէտ: Դժբախտաբար, հիմակուայ արտագաղթը երկիրը լքել է, որ չեմ մեղադրում, որովհետեւ տնտեսական վիճակը շատ ծանր է: Երկու օրով գնացինք մինչեւ Արցախ, ճանապարհի վրայի գիւղերում կիսալքուած վիճակ էր: Այս մասին շատ չխօսեմ, որովհետեւ դա բոլորը գիտեն, բոլորը գիտակից են, սակայն՝ անզօր:

ՄԵՐԻ ՄԱՍԵԱՆ.- Դուք մշտնապէս, որ արտագաղթի պատճառով այժմ այսպէս կոչուած տնտեսական գաղթօջախներ են ստեղծուում, երբ սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով մարդիկ լքում են երկիրը: Ի՞նչը յանգեցրեց այս վիճակին:

Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Իմ կարծիքով՝ երկիրը զարգացնելու պակասութիւնն է: Հարուստ երկիր չենք, բայց վերջապէս երկիր է. հզօր Սփիւռք ունի, որոշ ազատութիւն, որոշ բերրի հողեր ունի, ինչո՞ւ չպիտի կարողանայ կանոնաւոր ապրել: Հարստութիւնների բաշխումը բոլորովին սխալ է, անընդունելի: Մի կողմում կը տեսնենք մեծահարուստներ, միւս կողմում՝ լքում են գիւղերը: Չեմ ասում, որ միայն Հայաստանն է այս պատկերը ներկայացնում, բայց, դժբախտաբար, այստեղ այդպէս է: Ինչո՞ւ՞ դժուար է ասել: Ճիշդ է՝ նախ չկայ, մեծ հարստութիւն չկայ, բայց ես վստահ եմ, եթէ Հայաստանը լաւ ղեկավարուի, կը կարողանայ ապրել:

Մի բան ունի Հայաստանը, որը դժբախտաբար, ժողովուրդը չի կարողանում օգտագործել, դա մշակույթն է: Հազարմեայ մշակույթ է: Մի քանի ամիս առաջ, երբ հայ-ռուսական նկարների վերաբերեալ ցուցահանդէսն էի պատրաստում, այստեղ էի Ռուսիայի պատմութեան պետական թանգարանի տնօրէնի հետ: Տեսնելով պատմութեան թանգարանը, նա ապշած էր, թէ ինչպէ՞ս կարող են այդ բոլոր հարստութիւնները լինել այստեղ, այդ բոլոր ողբերգութիւններից յետոյ: Նա ասում էր, որ իրենք

ՏԻՐՈՒՆԻԱԿԱՆՆԵՐ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՏՈՒՆ ՀԱՅԿ ԲԺՇԿԵԱՆԻ ԾՈՒՆՈՒՅԻՆ



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան եւ Երեւանի Գայի անուան թիւ 129 հիմնական դպրոցը հերթական անգամ համատեղ կազմակերպեցին միջոցառումներու շարք՝ նուիրուած Հայկ Բժշկեանի ծննդեան օրուն: Այս անգամ եւս Գայի դպրոցի աշակերտները՝ զայականները, եւ ՄԳ Հնչակեան կուսակցութեան «Սարգիս Տըխրունի» ուսանողական երիտասարդական միութեան անդամներ հաւաքուեցան Գայի արձանի մօտ, ծաղիկներ դրին, երգեցին Գային նուիրուած երգեր, արտասանեցին բանաստեղծութիւններ: Դպրոցի տնօրէն Լիանա Պետրոսեանը ամփոփեց Գային նուիրուած միամենակը: Այնուհետեւ այցելեցին Գայի զարմուհին՝ 86 ամեայ էվելինա Նիկողայեանա Ստեփանովային: Տիկին էվելինան հետաքրքրական դրուագներ պատմեց

Հայկ Բժշկեանի կեանքէն, ցոյց տուաւ իր մօտ պահպանուած՝ Գայի եւ անոր ընտանիքի անդամներու լուսանկարները: Այցի ընթացքին Գայի դպրոցի փոխտնօրէն՝ տիկին Թամարա Պետրոսեանը հեռաձայնեց Գայի թոռան՝ կրտսեր Հայկ Բժշկեանին եւ բոլոր ներկաներու անունով շնորհաւորեց անոր մեծ հօր՝ աւագ Հայկ Բժշկեանի ծննդեան տարեդարձը: Հարկ է նշել, որ ինչպէս զօրավարի թոռնիկ, այնպէս ալ որոշ ազգականներ մշտապէս կապ կը պահեն դպրոցին հետ: Տիկին էվելինան շնորհակալութիւն յայտնեց պատանի «զայականներուն» եւ «Սարգիս Տըխրունի» ուսանողական երիտասարդական միութեան անդամներուն՝ Գայի տարեդարձը նշելու, իրեն այցելութեան եւ Գային նուիրուած միջոցառումներ կազմակերպելու համար:

ԿԻԼԻԿԵԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՀՐԱԻՐԷ ԶԵՁ

«Champagne Brunch Buffet»-ի ԲԱԶՄԱՏԵՍԱԿ ՆԱԽԱՃԱՇԻ ՅԱՆԿՈՎ

Տեղի պիտի ունենայ Կիրակի, Մարտ 1-ի առաւօտեան ժամը 10-ին, Հ.Մ.Ս-ի «Կարօ Սօդաճալեան» սրահի մէջ 1060 N.Allen Ave. Pasadena

Հասոյթը պիտի յատկացուի Հալեպի Կիլիկեան վարժարանի գոյատեւման

Զեր տեղերը ապահովելու համար զանգել սոյն թիւերուն՝
818-468-3648 818-406-7130 626-797-8465

ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՐԱՐԱՏ ՐԱՅ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՏՈՒՆԸ



Հայց. Եկեղեցույ Արեւմտեան Թեմը՝ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէր-տէրեանի միջոցաւ իր սերտ յարաբերութիւնը կը պահպանէ Միշըն Հիլզի մէջ գտնուող Արարատ Հայ Տարեցներու Տան հետ: Արդարեւ, այս հաստատութեան մատարան մէջ ամէն Կիրակի առաւօտեան ժամը 10:30ին ժամերգութիւն կը կատարուի եւ մասնաւոր տօներու առթիւ Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ հոգեւորականներ կ'այցելեն, Սուրբ Պատարագ եւ ա՛յլ արարողութիւններ կը կատարեն:

Ուրախ ենք հաղորդելու, որ Փետրուար 9ի առաւօտ Առաջնորդ Սրբազան Հայրը՝ ընկերակցութեամբ Գանատահայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Աբգար Եպիսկոպոս Յովակիմեանի, Թորոնթոյի Սուրբ Երրորդութիւն Հայց. Եկեղեցույ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Զարեհ Աւագ Քհնյ. Զարգարեանի, Լավալի Սուրբ Խաչ Հայց. Եկեղեցույ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Պոյաճեանի, Երուսաղէմէն Թեմս այցելող Հոգ. Տ. Բագրատ Վրդ. Պերճէքեանի, ինչպէս նաեւ Թեմիս հոգեւորականներէն Արժ. Տ. Աւետիս Քհնյ. Աբովեանի եւ Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Հայրապետեանի, յատուկ այցելութիւն տուին Արարատ Հայ Տարեցներու Տան եւ սիրով դիմաւորուեցան ինամակալ Մարմնի եւ Անձնակազմի կողմէ: Հոգեւորականները այցելե-

ցին տարեցներու, ապա հիւանդանոցի բաժինները: Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատեց ինամակալ Մարմնի ծառայութիւնը՝ Ատենապետութեամբ Իրաւաբան Տիար Ժողէֆ Կանիմեանի, ինչպէս նաեւ անձնակազմի, որոնք կը գուրգուրան մեր սիրելի տարեցներուն եւ հոգ կը տանին անոնց: Խնամակալ Մարմնի Ատենապետ՝ Իրաւաբան Տիար Ժողէֆ Կանիմեան Արարատ Տան անունով իր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնները յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ բացառիկ այս այցելութիւնը շնորհած էր Արարատ Տան: Պրն. Կանիմեան իր ուրախութիւնը յայտնեց, որ Առաջնորդ Սրբազան Հօր կը միանային Գանատահայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Աբգար Եպիսկոպոս Յովակիմեան եւ հիւր հոգեւորականներ:

Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ հոգեւորականները «Տնօրհնէք» կատարեցին եւ ապա առիթը ունեցան անձամբ գրուցելու տարեցներուն հետ եւ աղօթելու անոնց քաջաոգովութեան համար: Հոգեւորականները այցելեցին նաեւ Արարատ-էսքիճեան Թանգարանը եւ "Sheen Memorial Chapel"ը: Ապա ճաշեցին տարեցներուն հետ եւ Աստուծոյ փառք տուին, որ Արարատ Տունը չափազանց օգտակար կը հանդիսանայ մեր սիրելի հայրիկներուն եւ մայրիկներուն:

ԱՅՆԹԱՊԻ ԶԵՐՈՍԱՍԱՐՏԻ 95 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ԶՈԳԵՅԱՆԳԻՍ

Լոս Անձերլոսի Այնթապցիներու Մշակութային Միութեան վարչութիւնը Այնթապի հերոսամարտի 95 ամեակին եւ Հայոց Յեղասպանութեան 100 ամեակին առիթներով կը կազմակերպէ հոգեհանգիստ, ի չիշատակ հայ նահատակներու հոգիներուն: Հոգեհանգիստը տեղի պիտի ունենայ, Կիրակի 12 Ապրիլ 2015 թ. կէսօրուայ ժամը 12 ին, Ս. Ղեւոնդեանց մայր տաճարին մէջ, (Պըրպէնք): Հոգեհանգիստեան արարողութեանը կը նախագահէ Թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը:

Յաւարտ Ս. Պատարագի, համայն այնթապցիներ եւ պատուարժան հայրերին հրաւիրուած են ներկայ գտնուելու մեր կազմակերպած աւանդական ճաշերոյթին որ տեղի պիտի ունենայ ժամը 1ին, տաճարին կից՝ Գալայճեան սրահին

մէջ: Սոյն ճաշերոյթի ընթացքին՝ տեղի պիտի ունենայ զեղարուեստական ճոխ յայտագիր մը. իսկ օրուայ խորհուրդին մասին պիտի բանախօսէ՝ յատուկ այս առիթ հրաւիրուած Միշիլընի Համալսարանի դասախօս՝ Հայաստանի Ազգային Ակադեմիայի սփիւռքահայ անդամ՝ փրոֆեսոր Գէորգ Պարտազճեանը:

Կը խնդրուի նկատի ունենալ այս թուականը եւ հետեւիլ հայ մամուլի մէջ լոյս տեսնելիք մեր ծանուցումներուն: Հաճեցէք ձեր մասնակցութիւնը ապահովել՝ հեռաձայնելով Տիկին Աստղիկ Խանճեանին, (626) 355 3897, Տիկին Բրլա Գօթոյեանին, (818) 548 8318, կամ Պրն. Աւետիս Տէմիրճեանին, (818) 783 7368:

Ձեր ներկայութեամբ յարգած պիտի ըլլաք մեր նահատակներուն անմեղ չիշատակը:

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ՕՐ ՍԲ. ԳՐԻԶՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ «ԱՆՄՈՌՈՒԿ»/ ՎԱՐԴԱՆԱՆՑ



14 Փետրուար 2015, Շաբաթ օր, Փասատինայի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցույ շաբաթօրեայ վարժարանի 40 աշակերտները երեք հանդիսաւոր գործունէութիւններու շնորհիւ ապրեցան չիշատակելի եւ իմաստալից օր մը: Առաջին գործունէութիւնը նուիրուած էր Հայկական Յեղասպանութեան 100-ամեակի կարգախօսին եւ խորհրդանշանին նուիրուած սահիկներու ցուցադրութիւն մը: Այս մէկը կամաւորապէս կատարեցին ՀԲԸՄ Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական վարժարանի երկու աշակերտներ՝ Մեղգի Մանուկեանն ու Արի Էքմէքճեանը: Անոնք նախ ներկայացուցին «Կը Յիշեմ Եւ Կը Պահանջեմ/ Յիշում Եմ Եւ Պահանջում» կարգախօսը, ու զայն մեկնաբանեցին մանուկներուն հասկնալի լեզուով: Ապա տասնեակ մը սահիկի վրայ անոնք ցոյց տուին 100-ամեակի խորհրդանշան յայտարարուած «անմոռուկ» ծաղիկի չորս շերտերը եւ իւրաքանչիւրին շերտին եւ գոյնին վերագրուած իմաստը: Այս առիթով սրահին մէջ ցուցադրուած էին նաեւ աշակերտներու կողմէ պատրաստուած «100-ամեակը եւ Անմոռուկը» նիւթով

նկարներ: Յայտագրի երկրորդ բաժնին մէջ աշակերտները սրահէն դուրս, եկեղեցույ խաչքարին տակ իրենց տրամադրուած հողաշերտին վրայ ցանեցին անմոռուկներ: Իսկ աւագ դասարանի աշակերտները ստանձնեցին հունտերը ամէն շաբաթ ջրելու եւ զանոնք խնամելու պատասխանատուութիւնը:

Յետմիջօրէի բաժնին մէջ մանկապարտէզի աշակերտները ներկայացուցին Վարդանանցի գողտրիկ յայտագիր մը: «Զրահապատ» մանուկներ, «Քաջ Վարդանի թռուներ» երգով, ոտանաւորով եւ մանաւանդ իրենց «տողանցքով» խանդավառեցին բոլոր ներկաները:

Յայտագիրը վերջ գտաւ «Կիլիկիա» երգով, գոր կատարուեցաւ միաբերան բոլոր աշակերտներուն եւ ծնողներուն կողմէ:

Փասատինայի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցույ շաբաթօրեայ վարժարանը իր չորս դասարաններով կը ծառայէ Ս. Գաբրիէլ հովիտի 4-16 տարեկան հայրերին: Դպրոցի առաքելութիւնն է արուեստի, երգի եւ բանաստեղծութեան միջոցով աշակերտներուն տալ հայեցի դաստիարակութիւն ու զանոնք կապել մայրենի լեզուին:

ՎԱՐՉՈՒ ՄՐԱՅ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԳՈԳԻ ԳԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԳԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԳԵՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

«ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՄԵՐ ՀԱՅՐԵՆՆԻՔՆ Է» ԳԻՏԱԺՈՂՈՎ ՀՀ ՍՓԻՒՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ



Փետրուար 20-ին ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի լեզուի ինստիտուտի նախաձեռնութեամբ ՀՀ ԳԱԱ նախագահութեան նիստերու դահլիճին մէջ մեկնարկեց «Մեր լեզուն մեր հայրենիքն է» խորագիրով գիտաժողովը: Այս մասին կը յայտնէ ՀՀ սփիւռքի նախարարութեան պաշտօնական կայքը:

Բացման խօսքով հանդէս եկաւ ՀՀ սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեան: Ան շնորհակտեց բոլոր ներկաները Մայրենիի օրուան առթիւ՝ նշելով, որ այս տարի Մայրենիի օրուան նուիրուած ձեռնարկները կ'իրականացուին Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի ձեռնարկներու ծիրին մէջ: «Սա նոր երանգ է հաղորդում այս միջոցառմանը, քանի որ ցեղասպանութեան հետեւանք է նաեւ լեզուասպանութիւնը: Մենք չենք կարող առաջին հերթին մեծագոյն ցաւով չարձանագրել հայերէնի շուրջ երեք տասնեակ բարբառների կորուստը: Այլեւս գոյութիւն չունեն Ակնի, Խարբերդի, Երզնկայի, Տիգրանակերտի, Շապին Գարահիսարի, Վանի, Հաճընի, Սեբաստիայի, Մարաշի եւ բազում այլ բարբառները, որոնք հայերէնի իւրայատուկ դրսեւորումներ էին եւ մեր ժողովրդի լեզուաստեղծագործական ու ազգային մտածողութեան ինքնատիպ արտայայտութիւնները, եւ եթէ այսօր մեր երիտասարդներից շատերը չեն խօսում հայերէն, դա եւս ցեղասպանութեան հետեւանք է», - աւելցուց գերատեսչութեան ղեկավարը:

Նախարարը նշեց, որ 2015թ.-ին ՀՀ սփիւռքի նախարարութեան գերակայ ծրագիր հռչակուած է հայոց լեզուի տարածումը եւ երիտասարդութեան շրջանին մէջ հայոց լեզուի իմացութեան ընդլայնումը: Ան առանձնացուց

այն քայլերը, զոր կ'իրականացնէ գերատեսչութիւնը Սփիւռքի մէջ Մայրենիի պահպանութեան եւ տարածման ուղղութեամբ՝ մասնաւորապէս անդրադառնալով «Սփիւռք» ամսուային դպրոցին եւ «Արի տուն» ծրագիրին, որոնց ծիրին մէջ հայ պատանիներն ու երիտասարդները այցելելով Հայրենիք՝ իրենց իւրաքանչիւր առաւօտը կը սկսին Մայրենիի դասընթացներով, հայերէնով հաղորդակցելու բացառիկ հնարաւորութեամբ: Ան կարեւոր նկատեց նաեւ նախարարութեան ելեկտրոնային գրադարանին դերը հայապահպանութեան գործին մէջ:

«Մենք մշտապէս կարեւորել ենք Սփիւռքում մէկօրեայ դպրոցների ստեղծումը, եւ ուրախութեամբ պէտք է նշեմ, որ անցած ճամբիների աշխատանքի շնորհիւ տարբեր համայնքներում կարողացել ենք շուրջ 600 մէկօրեայ դպրոց հիմնել, մեծ նուաճում էր, որ կարողացանք հայոց լեզուի ուսուցման հեռուստադպրոց ստեղծել, որը հեռարձակում է հանրային հեռուստաընկերութեան արբանեակային հեռարձակմամբ», - ըսաւ նախարարը:

ՀՀ սփիւռքի նախարարը խօսեցաւ նաեւ Հայաստանի մէջ բնակութիւն հաստատած սուրիահայ եւ իրաքահայ մեր հայրենակիցներուն մասին, որոնց ընդելուզման հարցը առաւել արագ եւ ճիշդ կազմակերպելու համար նախարարութիւնը անոնց համար կը կազմակերպէ մայրենիի ուսուցման արագացուած դասընթացներ:

Իր խօսքի աւարտին նախարար Հրանտշ Յակոբեան երիտասարդութեան կոչ ուղղեց յատկապէս Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին իրենց կարեւորագոյն եւ ազգանպաստ գործը համարել հայերէն սորվիլը, հայերէն խօսիլը, եւ որ Մայրենիի օրը իւրաքանչիւրին համար դառնայ ոչ միայն Փետրուար 21, այլ տարուան բոլոր օրերը:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ

Հայ Ամերիկեան ծնողագուրկ Հայ-մանդամ երեխաների ֆոնտի նախագահ Յովհաննէս Բալայեանի եւ Ֆոնտի Գործադիր Մարմնի խնդրանքին ի պատասխան, «Նոյեան Տապան» գործակալութիւնից ստացել ենք սոյն հաղորդագրութիւնը:



Հայաստանի աշխատանքի եւ Սոցիալական ապահովութեան նախարար Արտեմ Ասատրեանի եւ Գիւմրիի քաղաքապետ Սամուէլ Բալասանեանը ջերմօրէն ողջունեցին Հայ-Ամերիկեան Բարեգործական Հիմնադրամի նոր նախաձեռնութեանը՝ Գիւմրիի մանուկների համար ստեղծել մանկական նոր կեդրոն՝ ի չիշատակ գոհուած Աւետիսեանների ընտանիքին:

Կարիքաւոր երեխաների համար ստեղծուող նոր կեդրոնը, որ յետագայում կրելու է «Եօթ հրեշտակաց մանկական օժախ» անունը, ծնողագուրկ եւ հայմանդամ երեխաների Սուրբ Ծննդի 15 ամեայ գործունէութեան բարի շարունակ

կութիւնն է: Ծրագրուում է շինարարական աշխատանքները աւարտել մինչեւ տարեվերջ:

Աւետիսեանների ընտանիքի ողբերգական ճակատագրերը, որ ընդհատուեց տարեակգբին, չուզում է նաեւ սփիւռքահայերին:

Այդ է պատճառը, որ նրանց ազնիւ ցանկութիւնը մեծ արձագանգ է գտել հազարաւոր սրտերում:

Բարեգործական-մանկական հաստատութիւնը գործելու է անվճար հիմունքներով, դառնալու է հիւրընկալ յարկ հազարաւոր կարիքաւոր մանուկների համար:

Հանրութեան Պատժելու Գործառնայթը

Շարունակուած էջ 2-էն

պահ եւ արդարադատութիւն իրականացնող մարմիններին:

Այսօր եւրոպական ժողովրդավարութիւնից սնուող հանրութիւնները, հրապարակախօսին որդեգրելով ժողովրդավարական կառավարման ձեւը, սակայն չպահանջելով նրա առանցքային սկզբունքները, ստիպուած են երբեք հաշուի նստել նրա կարգաւորիչ աներեւոյթ մեխանիզմների մատուցած անակնկալների հետ: Դրանց միջոցով կարող են դաժանօրէն պատժուել թէ՛ պետութեան

կառավարման լծակները իւրացրած յանցաւոր շրջանակները՝ ժողովրդի ապստամբութեան դիմելու միջոցով ֆիզիկապէս ոչնչանալով, թէ՛ ժողովուրդը՝ գրկուելով անկախութիւնից ու ազատութիւնից: Վերջինս արդէն իսկ իրեն վերապահուած պատժելու գործառնայթի անտեսման պատճառով իրապէս պատժուած է տարիներ շարունակ՝ կորցնելով ոչ միայն քաղաքական իրաւունքները, այլեւ՝ հանրային համակեցութիւնը իրապէս անձանց կողմից ենթարկուելով նուաստացման ու կեղեքման:

«ՀԵՏՔ»

Եկել է հեռանալու ժամանակը

Շարունակուած էջ 2-էն

սութիւնը քաղաքականութեամբ զբաղուողների համար է, իսկ Հայաստանում քաղաքականութեամբ զբաղուած են միայն արտաքին կենտրոնները:

Սերժ Սարգսեանը նախորդ կառավարութեանը յանձնարարել էր 5-7% տնտեսական աճ ապահովել: Երբ պարզ դարձաւ, որ այդ ցուցանիշը հնարաւոր չի լինի ապահովել, ոչ առանց Յովիկ Աբրահամեանի «օգնութեան» Տիգրան Սարգսեանը հեռացուեց պաշտօնից:

Սերժ Սարգսեանը Յովիկ Աբրահամեանին յանձնարարութիւն չի տուել ու թուեք չի նշել: Այնպիսի սպաւորութիւն է, որ Աբրահամեանին վարչապետ են նշանակել ոչ թէ թուեք ապահովելու, այլ այդ կարեւոր պաշտօնին նրա անգործնակութիւնը

ապացուցելու համար:

Անգործունակութիւնն ապացուցուած է, մակրոտնտեսական ցուցանիշները վատթարանում են, Գազիկ Ծառուկեանն արդէն թիկունքը չի պահում, եւ եկել է հեռանալու ժամանակը:

Հայաստանի վարչապետի պաշտօնում անհրաժեշտ է մէկը, ով գտնուած է, որ քաղաքականութեան համար շատ խելք է պէտք: Պէտք է մարդ, ով առանց վախենալու կը յայտարարի, որ Եւրասիական միութեանը Հայաստանի անդամակցութիւնը տնտեսական օգուտներ չի բերում, որ Հայաստանը պէտք է սառեցնի այդ միութեանն իր անդամակցութիւնը, որ պէտք է ֆեոդալիզմից կապիտալիզմի անցնել: Դրա համար վարչապետը չպէտք է ֆեոդալ լինի:

«ԼՐԱԳԻՐ»

Շնորհակալիք

Նոր Սեբուսի Մշակութային Միութեան պարախումբի վարչութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք, իրենց մասնակցութիւնը բերին վարչութեան կազմակերպած ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ, որը պիտի նպաստէ պարախումբի նոր հազուստներու գնման: .

Շնորհաւորելով նուէրը շահող բախտաւորին, որ այս առթիւ 250 տոլար նուիրեց Ն.Ս.Մ.-ի պարախումբի, շնորհակալութիւն կը յայտնենք մեզ բոլոր փաջալերողներուն:

ՆՍՄՄ ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՊԱՆԵԱՆ

Շարունակուած էջ 8-էն

գրքում Ձոն կիրակոսեանը խորհրդային տարիներին՝ 1982-ին պատասխանում է այդ հարցին, բնականաբար՝ իր ժամանակ նա չէր կարող առկայ բոլոր աղբիւրներին ծանօթ լինել: Նրանք ոչ միայն հիմնել են կազմակերպութիւնը, այլև կոնկրետ հրաման են իջեցնում յայտնի հրեաներին՝ ընդունել իսլամ, անուն-ազգանունը փոխել եւ համաթուրքական՝ պանթուրանական կազմակերպութեան գարգացման համար աշխատել: Պանթուրքիզմի գաղափարախօսութեան հիմնադիրները թուրքերը չեն: Հրեաներն ու քրդերն են: Հնարաւոր է: Թուրան երկրի երազանքը հրեայինը կամ քրդինը լինի: 1883 թ. ծնուած, հրեայ հոգեւորականի գաւակ, իսկական անունով Մոիզ Քոհեն, բալկանեան պատերազմի տարիներին փոփոխուած թուրքական անունով Մուսիա Թեքինալին ու 1876 թ. Տիգրանակերտում ծնուած քուրդ Ջիա Գիոքալիը այդ անմարդկային գաղափարախօսութեան առաջնորդներն են հանդիսացել: Երբ երիտթուրքերը տարիներ անց կայացնում են հայերին վերացնելու գաղտնի որոշումը, կազմակերպութեան ներսում վիճաբանութիւնների ժամանակ ծագումով թուրք անդամները փորձում են հակառակուէլ՝ ինչպէ՞ս, ո՞նց վերացնել ամբողջ ժողովրդին իր բնօրինակում: Երբ 1948-ին Խորհրդային պետութիւնը իրեն անկախ հռչակեց, այդ բոլոր հողատարածքները հրեաների կողք կողքի գնած հողերն էին, ինչպէս դուք տնամերձ էք գնում՝ մի տեղ՝ 500 քառակուսի մետր, մի տեղ՝ 400, մի տեղ՝ 200, մի տեղ՝ 700: Եթէ արանքում օտար մէկը կայ, ստիպում էք, որ իր հողը վաճառի, գնայ: Օսմանեան կայսրութեան ժամանակահատուածում այդ բոլոր աշխատանքները սուսուփուս կատարուել են, բայց կան զեկուցագրերը «Ալեանս իսրայելիտ» կազմակերպութեան: Նրանց քաղաքական միջնորդն ու ֆինանսական հովանաւորը Ալեքսանդր Պարուսն էր: Նա է Լենինին Շուէյցարիայից Պետերբուրգ բերել՝ յեղափոխութիւն անելու, եւ նա է Արեւմտեան Հայաստանի կորստի ամբարձրման աշխատանքների երկրորդ հատուածի հեղինակը: Ցեղասպանութեան անընդհատութեան մէջ բոլշեւիկեան Ռուսաստանի դերակատարումը, Լենին-Աթաթուրք յարաբերութիւնները, ամէն ինչ պատուում են Պարուսի շուրջ: Նա կար 1890-ին՝ Աբդուլ Համիդի ժամանակ, կար երիտթուրքերի ժամանակ ու ամբողջութեամբ ֆինանսաւորում էր նրանց, հովանաւորում կոնկրետ նպատակներով ուղարկուած հրեաներին, եկել ու ապրում էր Կոստանդնուպոլսում՝ տեղում աշխատելով դեսպանութիւնների հետ: Պատրաստ էր փակել Օսմանեան կայսրութեան բոլոր պարտքերը, պահում, զարգացնում էր երիտթուրքական կազմակերպութիւնը, իշխանութեան բերում եւ ամբարձրում նրանց: Նոյն ժամանակահատուածում ամէն ինչ անում է, որ թուրքերը լեզու գտնեն ռուսների հետ: Բայց ոչ Ռոմանովների ցարական Ռուսաստանի հետ, այլ նորերի, որոնց իշխանութեան է բերում: Ովքե՞ր էին բոլշեւիկները: Լենինը, Տրոցկին, Կամենեւը, Ջինովեւը, Սվերդլովը: Մեծ մասամբ՝ ծագումով հրեաներ: Բելա-

ռուս չէին, լատիշ չէին, ֆինն չէին, հայ չէին, վրացի չէին, հրեայ էին: Ջարգացած, խելօք ուրիշ մարդ չկա՞ր, որ ռուս սոցիալ-դեմոկրատների հիմնադիրները հրեաներն էին: Երբ պատմութեան էջերը թերթում ես, ամէն տեղ դիմացդ գալիս է Պարուսը: Դա համակարգուած, ծրագրուած աշխատանք էր: Եւ՝ ցեղասպանութիւն հայերի հանդէպ, ոչ միայն Արեւմտահայաստանում, այլև կիլիկիայում, Թրակիայում, Բուլթանիայում, Գամիրքում: Մտածել էք՝ ի՞նչ եղաւ Ալեքսանդր Մանթաշեանը, Պաքուի նախարարինաբերութիւնը հայերի ձեռքում էր, նախարարինահանող գրեթէ բոլոր ընկերութիւնները հայկական էին: Որտեղի՞ց ու ինչպէ՞ս յայտնուեցին Ռուշիլդները: Ալեքսանդր Մանթաշեանը՝ պրպտող, աշխատասէր, խելացի, հարուստ, ո՞նց վերացաւ: Ի՞նչ եղաւ հայութեան առեւտրատնտե-

սական հակայական համակարգը: Օսմանեան կայսրութեան տնտեսութեան համարեա՞ 80 տոկոսը հայութեան ձեռքում էր, կապուած էր Մանթաշեանի, Նիւ Եորքի, Փարիզի, Վենետիկի հետ: Ու միանգամից կտրուե՞ց: Իսկ հայութիւնն ի՞նչ եղաւ: Ծրագրի համաձայն՝ բնաջնջուած էր ոչ միայն հայութիւնը ֆիզիքապէս, այլև քանդուած էր առեւտրատնտեսական կառույցը ծայրից ծայր: Ինչո՞ւ այս ամէնը չի բացուում, չի ներկայացոււմ, ի՞նչ են անում դրամաշնորհով աշխատող կազմակերպութիւնները: Այս բոլոր իրողութիւններով ինստիտուտներ պիտի աշխատէին, ոչ թէ մէկ, այլ այլընտրանքային տեսակէտներ ներկայացնէին ու մեր սեղանին արդէն դրած լինէին իրենց աշխատանքները: Չկայ: Չենք ճանաչում անցեալը: Ինչո՞ւ: Ովքեր էին սպիտակ թուրքերը: Գիտե՞նք:

Հրապարակման պատրաստեց Անահիտ Ա.ԴԱՄԵԱՆԸ

1. Ստեղծուել է 1911 թ.՝ 1908-ի սահմանադրութեան հոչակումից յետոյ առաջացած ընդդիմադիր մանր կուսակցութիւնների եւ խմբաւորումների հիմքի վրայ: Այդ կուսակցութեանը միացել են ազգային փոքրամասնութիւնների համարեա՞ բոլոր բաղաձայն կազմակերպութիւնները: Նրանց աջակցութիւնը ստանալու եւ նրանց հետ դաշինք պահպանելու նպատակով «Ազատութիւն եւ համաձայնութիւն» կուսակցութիւնը իր ծրագրում ներառել է ազգային մարզերի ինքնավարութեան եւ Օսմանեան կայսրութեան վարչական ապակետրոնացման սկզբունքը՝ տարածքային ամբողջականութեան պահպանմամբ:
2. Պատմութեան առաջ չմեղանջելու համար պէտք է նշել, որ հենց իրիւաֆականների ստեղծած կառավարութիւնը էր Կ. Պոլսում կազմակերպել երիտթուրքերի դաւաճարութիւնը (1919-20 թթ.):



Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակ

ԱՊՐԻԼ 24, 10^h

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՅԼԱՐՇԱԿ

ՓՈՔՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԴԷՊԻ ԹՐՔԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆ

Հարիւրամեակի Ձեռնարկներ

Ապրիլ 14 Էբումեցիք Արարողութիւն <small>Cathedral of Our Lady of the Angels Los Angeles, CA</small>	Ապրիլ 23 Հանդիսաւոր Սուրբ Պատարաք <small>Սուրբ Ղեւոնդեանց Մայր Տաճար Burbank, CA</small>	Ապրիլ 24 Արդարութեան Բայլարշա <small>Փոքրիկ Հայաստանէն դէպի Թրքական Հիւպատոսարան</small>	Ապրիլ 25 Հսկում <small>Մոնթեպելլոյի Ցեղասպանութեան Յուշարձան Bidwell Park, Montebrello, CA</small>	Ապրիլ 26 Յուշ Երեկոյ <small>Կազմակերպութեամբ Կլեմտէյի Քաղաքապետութեան Alex Theatre, Glendale, CA</small>
---	---	---	---	---

Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէ՛ք՝ www.march4justice.org